

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B **ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի դեկտեմբերի 9-ի 96/82/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**
Վտանգավոր նյութերի առկայությամբ խոշոր վթարների վտանգները
վերահսկելու մասին

(ՊՏ L 010, 14.01.1997 թ., էջ.13)

Փոփոխած՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

<u>M1</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով	1 31.10.2003թ.
<u>▼M2</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 345 թվականի դեկտեմբերի 16-ի 2003/105/ԵՀ հրահանգով	97 31.12.2003թ.
<u>▼M3</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 L 311 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008(ԵՀ) կանոնակարգ	1 21.11.2008թ.

Ծանոթագրություն՝ այս համախմբված տարբերակը հղումներ է պարունակում Եվրոպական հաշվարկային միավորին և (կամ) ԵԱՄ-ին, որոնք 1999 թվականի հունվարի 1-ից պետք է ընկալվեն որպես հղումներ եվրոյին. Խորհրդի թիվ 3308/80 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 345, 20.12.1980թ., էջ 1) և Խորհրդի թիվ 1103/97 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 162, 19.06.1997թ., էջ 1):

▼B

ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 96/82/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Վտանգավոր նյութերի առկայությամբ խոշոր վթարների վտանգները վերահսկելու մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130-րդ (1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան (3),

- 1) քանի որ, Խորհրդի 1982 թվականի հունիսի 24-ի թիվ 82/501/ԵՏՀ «Արդյունաբերական որոշ գործունեության հետևանքով խոշոր վթարների վտանգների մասին» հրահանգն (4) առնչվում է արդյունաբերական որոշ գործունեության հետևանքով առաջացող՝ հավանական խոշոր վթարների կանխմանը, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքների սահմանափակմանը,
- 2) քանի որ Համայնքի շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականության նպատակներն ու սկզբունքները, ինչպես սահմանված է Պայմանագրի 130-րդ (1) և (2) հոդվածով ու մանրամասն ներկայացված է Եվրոպական համայնքի շրջակա միջավայրին վերաբերող գործողությունների ծրագրերում (5), նպատակաուղղված են, մասնավորապես, շրջակա միջավայրի որակի պահպանմանն ու պաշտպանությանը, ինչպես նաև կանխարգելիչ գործողությունների միջոցով մարդկային առողջության պաշտպանությանը,
- 3) քանի որ Խորհուրդը և անդամ պետությունների կառավարությունները, հանդիպելով Խորհրդի շրջանակներում, նրանց կողմից կից ներկայացված Շրջակա միջավայրին

վերաբերող գործողությունների չորրորդ ծրագրին (6) առնչվող որոշման մեջ կարևորել են թիվ 82/501/ԵՏՀ հրահանգի ավելի արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը և պահանջել, որ Հրահանգի վերանայված տարբերակում, անհրաժեշտության դեպքում, ներառվի վերջինիս գործողության ոլորտի հնարավոր ընդլայնում և անդամ պետությունների միջև խնդրին վերաբերող ավելի շատ տեղեկատվության փոխանակում, քանի որ Գործողությունների հինգերորդ ծրագրով, որի ընդհանուր մոտեցումը հաստատվել է անդամ պետությունների ու կառավարությունների ներկայացուցիչների կողմից, և Խորհրդի շրջանակներում 1993 թվականի փետրվարի 1-ին (7) տեղի ունեցած հանդիպման արդյունքում կայացրած որոշմամբ ևս հետևողականորեն պահանջվում է ռիսկի և վթարի ավելի լավ կառավարում,

- 4) քանի որ Բոսալում և Մեխիկոյում տեղի ունեցած վթարների լույսի ներքո, որոնք ցույց տվեցին այն վտանգը, որն առաջանում է, երբ վտանգավոր տեղանքներն ու բնակելի տները միմյանց մոտ են տեղակայված, Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ հրավիրվեց Հանձնաժողովի նիստ՝ թիվ 82/501/ԵՏՀ հրահանգում նոր կայանքների թույլտվության և գործող կայանքների շուրջ քաղաքային զարգացման դեպքերում հողօգտագործման պլանավորման վերահսկման վերաբերյալ դրույթներ ներառելու նպատակով,
- 5) քանի որ, Խորհրդի նշված որոշմամբ, Հանձնաժողովը հրավիրվեց անդամ պետությունների հետ ավելի խորը փոխըմբռնման և ազգային սկզբունքների ու անվտանգության մասին հաշվետվությունների վերաբերյալ փորձի ներդաշնակեցման ուղղությամբ աշխատելու համար,
- 6) քանի որ խոշոր վթարների վերահսկման նպատակով ցանկալի է միավորել տարբեր մոտեցումների արդյունքում ձեռք բերված փորձը, և քանի որ Հանձնաժողովը և անդամ պետությունները պետք է զարգացնեն իրենց հարաբերությունները համապատասխան միջազգային մարմինների հետ ու հետամուտ լինեն երրորդ երկրներում կիրառության համար նախատեսված և սույն Հրահանգով սահմանված միջոցներին համարժեք միջոցներ սահմանելուն,
- 7) քանի որ Եվրոպայի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության

տնտեսական հանձնաժողովի Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցությունների մասին եվրոպական կոնվենցիայով նախատեսվում են միջոցներ՝ ուղղված անդրսահմանային ազդեցություններ պատճառելու հավանականություն ունեցող արդյունաբերական վթարների կանխմանը, դրանց նկատմամբ պատրաստվածությանը, դրանց արձագանքմանը, ինչպես նաև այդ ոլորտում միջազգային համագործակցությանը,

- 8) քանի որ, թիվ 82/501/ԵՏՀ հրահանգը ներդաշնակեցման գործընթացի առաջին փուլն է, քանի որ նշված Հրահանգը պետք է հետևողական և արդյունավետ կերպով վերանայվի ու լրացվի Համայնքի ամբողջ տարածքում՝ բարձր մակարդակով պաշտպանություն ապահովելու նպատակով, քանի որ ներկայիս ներդաշնակեցման գործընթացը սահմանափակվում է լայն տարածում ունեցող ազդեցություններով ուղեկցվող խոշոր վթարների կանխման և դրանց հետևանքների սահմանափակման համար անհրաժեշտ ավելի արդյունավետ համակարգի ներմուծման միջոցներով,
- 9) քանի որ խոշոր վթարները կարող են սահմաններից դուրս տարածվող հետևանքներ ունենալ, և քանի որ վթարի էկոլոգիական և տնտեսական ծախսերը հոգում են ոչ միայն ազդեցության ենթարկված հաստատությունը, այլ նաև համապատասխան անդամ պետությունները, քանի որ այդ իսկ պատճառով անհրաժեշտ է Համայնքի ամբողջ տարածքում ապահովել պաշտպանության բարձր մակարդակ,
- 10) քանի որ սույն Հրահանգի դրույթները պետք է կիրառվեն՝ չհակասելով աշխատավայրում առողջության և անվտանգության վերաբերյալ Համայնքի դրույթներին,
- 11) քանի որ պատշաճ գործելակերպ չէ որոշ կայանքների ցանկի օգտագործումը, այն դեպքում, երբ այն կարող է և բաց թողնել համանման վտանգ ներկայացնող այլ կայանքներ, և այդպիսով խոշոր վթարների հնարավոր աղբյուրներին թույլ տալ խուսափել կարգավորումից, և քանի որ թիվ 82/501/ԵՏՀ հրահանգի գործողության ոլորտը պետք է փոփոխվի, որպեսզի դրույթները կիրառվեն բոլոր այն հաստատությունների նկատմամբ, որտեղ առկա են խոշոր վթարներ առաջացնելու հավանականություն ունեցող բավականաչափ մեծ քանակությամբ վտանգավոր նյութեր,

- 12) քանի որ, հաշվի առնելով Պայմանագիրը և Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն՝ անդամ պետությունները կարող են ուժի մեջ պահել կամ ընդունել սույն Հրահանգում չընդգրկված նավահանգիստներում, նավամատույցներում կամ պահեստներում տրանսպորտային գործունեության համար նախատեսված համապատասխան միջոցներ՝ սույն Հրահանգով սահմանված անվտանգության համարժեք մակարդակ ապահովելու համար,
- 13) քանի որ վտանգավոր նյութերի փոխանցումը խողովակաշարերի միջոցով նույնպես մեծ վթարներ առաջացնելու հավանականություն ունի, և քանի որ Համայնքում այդօրինակ գործողությունները և համապատասխան պատահարների դեպքերը կարգավորող առկա մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելուց և այն գնահատելուց հետո Հանձնաժողովը պետք է պատրաստի այդ դեպքի վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում, այդ ոլորտում գործելու համար ամենահարմար միջոցը սահմանող հաղորդագրություն,
- 14) քանի որ, հաշվի առնելով Պայմանագիրը և Համայնքի համապատասխան օրենսդրության համաձայն՝ անդամ պետությունները կարող են ուժի մեջ պահել կամ ընդունել դատարկ հողատարածքները թափոններով լցնելու վերաբերյալ միջոցներ, որոնք չեն կարգավորվում սույն Հրահանգով,
- 15) քանի որ Համայնքում տեղի ունեցած խոշոր վթարների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունը պայմանավորված է կառավարման կամ կազմակերպչական բնույթի սխալներով, և քանի որ, այսպիսով, անհրաժեշտ է Համայնքի մակարդակով սահմանել կառավարման համակարգի հիմնական այն սկզբունքները, որոնք կարող են հարմար լինել՝ խոշոր վթարների վտանգները վերահսկելու և դրանց հետևանքները սահմանափակելու համար,
- 16) քանի որ իրավասու մարմինների կողմից կազմակերպված հաստատությունների ստուգման միջոցառումների տարբերությունները կարող են հանգեցնել պաշտպանության տարբեր մակարդակների, և քանի որ անհրաժեշտ է Համայնքի մակարդակով սահմանել այն հիմնական պահանջները, որոնց պետք է համապատասխանեն անդամ պետությունների կողմից սահմանված ստուգման համակարգերը,

- 17) քանի որ, ցույց տալու համար, որ արվել է անհրաժեշտ ամեն բան՝ խոշոր վթարները կանխելու համար, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրեր և պատասխան միջոցներ նախապատրաստելու համար տնտեսավարող սուբյեկտը, հաստատություններում առկա վտանգավոր նյութերի մեծ քանակության դեպքում, պետք է իրավասու մարմնին որպես անվտանգության վերաբերյալ հաշվետվություն՝ տեղեկատվություն տրամադրի, որը կպարունակի հաստատության, առկա վտանգավոր նյութերի, կայանքի կամ պահեստների, հնարավոր խոշոր վթարների և գոյություն ունեցող կառավարման համակարգերի մասին մանրամասներ՝ խոշոր վթարների վտանգը կանխելու և նվազեցնելու, ինչպես նաև դրանց հետևանքների սահմանափակման համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար,
- 18) քանի որ շղթայական ազդեցության վտանգը նվազեցնելու համար այն դեպքում, երբ հաստատություններն այնպես կամ այնքան միմյանց մոտ են տեղակայված, որ կարող են ավելացնել խոշոր վթարների հավանականությունն ու հնարավորությունը, կամ ծանրացնել դրանց հետևանքները, պետք է դրույթ նախատեսվի՝ համապատասխան տեղեկատվության փոխանակման և հանրությանը տեղեկացնելու գործում համագործակցության վերաբերյալ,
- 19) քանի որ խթանելու համար շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից պատրաստված անվտանգության վերաբերյալ հաշվետվությունները պետք է հասանելի լինեն հանրության համար, իսկ այն անձանց, ովքեր հավանական է, որ կարող են տուժել խոշոր վթարից, պետք է այդ դեպքի ժամանակ ճիշտ քայլեր ձեռնարկելու մասին բավարար տեղեկատվություն տրամադրվի,
- 20) քանի որ արտակարգ իրավիճակների նկատմամբ քայլեր ձեռնարկելու համար և հաստատություններում մեծ քանակությամբ վտանգավոր նյութերի առկայության դեպքում անհրաժեշտ է կազմել արտաքին և ներքին արտակարգ իրավիճակների ծրագրեր և ստեղծել այնպիսի համակարգեր, որոնք կապահովեն այդ ծրագրերի փորձարկումը, անհրաժեշտության դեպքում՝ վերանայումը, ինչպես նաև խոշոր վթարի ժամանակ կամ դրա հավանականության դեպքում՝ վերջինիս կիրառումը,

- 21) քանի որ ներքին արտակարգ իրավիճակի ծրագրի կազմման ընթացքում պետք է խորհրդակցել հաստատության աշխատակազմի, իսկ արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրի կազմման ընթացքում՝ հանրության հետ,
- 22) քանի որ բնակելի գոտիների, հասարակության կողմից մեծապես օգտագործվող, ինչպես նաև բնության տեսակետից հատուկ հետաքրքրություն ներկայացնող կամ զգայուն գոտիների համար ավելի ուժեղ պաշտպանություն ապահովելու համար անհրաժեշտ է անդամ պետությունների կողմից կիրառվող հողօգտագործման և (կամ) այլ համապատասխան քաղաքականությունների մեջ երկարաժամկետ կտրվածքով հաշվի առնել այդպիսի գոտիների և նման վտանգ ներկայացնող հաստատությունների միջև համապատասխան հեռավորություն պահելու անհրաժեշտությունը, իսկ գործող հաստատությունների դեպքում հաշվի առնել հավելյալ տեխնիկական միջոցներ, որպեսզի մարդկանց համար վտանգը չավելանա ,
- 23) քանի որ խոշոր վթարի դեպքում համարժեք պատասխան միջոցների ձեռնարկումն ապահովելու համար տնտեսավարող սուբյեկտը անմիջապես պետք է իրավասու մարմիններին տեղեկացնի և ներկայացնի այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է նրանց՝ տվյալ վթարի ազդեցությունը գնահատելու համար,
- 24) քանի որ տեղեկատվության փոխանակում նախատեսելու, ինչպես նաև նման բնույթի վթարներն ապագայում կանխելու համար անդամ պետություններն իրենց տարածքում տեղի ունեցող խոշոր վթարների մասին տեղեկատվություն պետք է փոխանցեն Հանձնաժողովին, որպեսզի այն կարողանա վերլուծել համապատասխան վթարները և, մասնավորապես, խոշոր վթարների, և դրանցից քաղված դասերի վերաբերյալ տեղեկատվության բաշխման համակարգ կիրառել, և քանի որ սույն տեղեկատվության փոխանակումը պետք է վերաբերի նաև «վթարի նախադրյալներին», որոնք, անդամ պետությունների դիտարկմամբ, խոշոր վթարների կանխման և դրանց հետևանքների սահմանափակման համար տեխնիկական տեսանկյունից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում,

Հոդված 1

Նպատակը

Սույն Հրահանգը նպատակաուղղված է վտանգավոր նյութերի առկայությամբ խոշոր վթարների կանխմանը և մարդկանց, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքների սահմանափակմանը՝ Համայնքի ամբողջ տարածքում հետևողական և արդյունավետ կերպով պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու համար:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Հրահանգը կիրառվում է այն հաստատությունների նկատմամբ, որտեղ առկա է վտանգավոր նյութերի՝ I հավելվածի 1-ին մասի և 2-րդ մասի 2-րդ սյունակում թվարկված չափերին հավասար կամ դրանք գերազանցող քանակություն, բացառությամբ 9-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածների, որոնք կիրառվում են ցանկացած այն հաստատության նկատմամբ, որտեղ վտանգավոր նյութերի քանակությունը հավասար է I հավելվածի 1-ին մասի և 2-րդ մասի 3-րդ սյունակում թվարկված չափերին կամ գերազանցում է դրանք:

Սույն Հրահանգի նպատակներով՝ «վտանգավոր նյութերի առկայություն» նշանակում է հաստատությունում այդօրինակ նյութերի փաստացի կամ կանխատեսելի առկայությունը, կամ այնպիսի նյութերի առկայությունը, որոնք ենթադրվում է, որ կարող են առաջանալ արտադրության քիմիական պրոցեսի նկատմամբ վերահսկողության կորստի հետևանքով՝ I հավելվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սահմանաչափերին հավասար կամ դրանք գերազանցող քանակությամբ:

2. Սույն Հրահանգի դրույթները կիրառվում են առանց հակասելու աշխատանքի միջավայրին վերաբերող Համայնքի դրույթներին և, մասնավորապես, «Աշխատանքում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի թիվ 89/391/ԵՏՀ հրահանգին (8):

Հոդված 3

Սահմանումներ

Սույն Հրահանգի իմաստով՝

1. «հաստատություն» նշանակում է տնտեսավարող սուբյեկտի հսկողության տակ գտնվող այն ամբողջ տարածքը, որտեղ մեկ կամ ավելի կայանքներում, ինչպես նաև ընդհանուր կամ միմյանց հետ կապված ենթակառուցվածքներում կամ գործունեության ընթացքում առկա են վտանգավոր նյութեր.
2. «կայանք» նշանակում է հաստատության ներսում գտնվող այն տեխնիկական միավորը, որում արտադրվում, օգտագործվում, պահպանվում կամ պահեստավորվում են վտանգավոր նյութեր: Այն ներառում է բոլոր սարքավորումները, կառուցվածքները, խողովակաշարերը, մեխանիզմները, հաստոցները, մասնավոր երկաթուղային պահեստադահլիճները, նավանորոգարանները, կայանքների համար ծառայող բեռնաթափման նավակայանները, նավամատուցները, պահեստները կամ համանման կառույցները՝ ծովի վրա կամ այլ կերպ, որոնք կայանքների գործարկման համար անհրաժեշտ են.
3. «տնտեսավարող սուբյեկտ» նշանակում է ցանկացած անհատ կամ իրավաբանական անձ, ով գործարկում կամ իր տնօրինության ներքո ունի կայանք կամ ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ տեխնիկական գործունեության ընթացքում որոշիչ տնտեսական իշխանություն.
4. «վտանգավոր նյութ» նշանակում է I հավելվածի 1-ին մասում թվարկված կամ I հավելվածի 2-րդ մասով սահմանված չափորոշիչները բավարարող նյութը, խառնուրդը կամ պատրաստուկը, ինչպես նաև գոյություն ունեցող հումքը, արտադրանքը, կողմնակի արտադրանքը, նստվածքները կամ միջանկյալ նյութերը՝ ներառյալ այնպիսի նյութեր, որոնք, կարելի է հիմնավորապես ենթադրել, որ կարող են առաջանալ վթարի հետևանքով.
5. «խոշոր վթար» նշանակում է այնպիսի պատահար, ինչպիսիք սույն Հրահանգով կարգավորվող ցանկացած հաստատության գործունեության ընթացքում չվերահսկված զարգացումների պատճառով հաստատության ներսում կամ դրանից դուրս տեղի ունեցած խոշոր արտահոսքը, հրդեհը կամ պայթյունն է, որը հանգեցնում

է մարդկային առողջությանը և (կամ) շրջակա միջավայրին անմիջապես կամ ավելի ուշ սպառնացող լուրջ վտանգի՝ ներգրավելով մեկ կամ ավելի վտանգավոր նյութեր.

6. «վտանգ» նշանակում է վտանգավոր նյութին բնորոշ այն հատկանիշը կամ ֆիզիկական այն վիճակը , որն ունակ է վնաս հասցնել մարդկանց առողջությանը և (կամ) շրջակա միջավայրին.
7. «ռիսկ» նշանակում է հատուկ ազդեցության հավանականությունը՝ որոշակի ժամանակահատվածում կամ որոշակի հանգամանքներում.
8. «պահեստ» նշանակում է այն վայրը, որտեղ առկա է վտանգավոր նյութերի որոշակի քանակություն՝ պահեստավորման, ի պահ դնելու կամ պահեստում պահելու նպատակներով:

Հոդված 4

Բացառումներ

Սույն Հրահանգը չի կիրառվում հետևյալների նկատմամբ՝

ա) ռազմական հաստատություններ, կայանքներ կամ պահեստներ.

բ) իոնացնող ճառագայթման հետևանքով առաջացած վտանգներ.

գ) վտանգավոր նյութերի և միջանկյալ ժամանակավոր պահեստների փոխադրում սույն Հրահանգով կարգավորվող հաստատություններից դուրս՝ ավտոճանապարհով, երկաթուղով, ներքին ջրերով, ծովով կամ օդով՝ ներառյալ նավահանգիստներում, նավամատուցներում կամ պահեստներում բեռնումն ու բեռնաթափումը, ինչպես նաև դեպի տրանսպորտային մեկ այլ միջոց կամ այդ միջոցից դեպի մյուսը փոխադրումը.

դ) վտանգավոր նյութերի փոխադրում սույն Հրահանգով կարգավորվող հաստատություններից դուրս՝ խողովակաշարերով, այդ թվում՝ պոմպակայաններով.

▼M2

ե) հանքանյութերի օգտագործում (ուսումնասիրություն, դուրսբերում և մշակում) հանքավայրերում, քարհանքներում կամ հորատներում՝ բացառությամբ I հավելվածում սահմանված վտանգավոր նյութերի քիմիական և ջերմային մշակման գործընթացների ու այդ գործընթացների հետ կապված պահեստավորման.

զ) հանքանյութերի և այդ թվում՝ ածխաջրածինների օֆշորային ուսումնասիրություն ու օգտագործում.

▼M2

է) թափոններով լցված հողատարածքներ՝ բացառությամբ գործող թափոնների հեռացման և վնասազերծման կառուցվածքների, այդ թվում՝ I հավելվածում սահմանված վտանգավոր նյութեր պարունակող թափոնների ավազանների կամ ամբարտակների, մասնավորապես այն դեպքում, երբ դրանք օգտագործվում են հանքանյութերի քիմիական կամ ջերմային մշակման համար:

▼B

Հոդված 5

Տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր պարտավորությունները

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տնտեսավարող սուբյեկտը ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ խոշոր վթարները կանխելու և մարդկանց, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրա հետևանքները սահմանափակելու համար:
2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տնտեսավարող սուբյեկտից պահանջվի, որ վերջինս 16-րդ հոդվածում նշված իրավասու մարմինն, այսուհետ՝ «իրավասու մարմին», ցանկացած ժամանակ, մասնավորապես, 18-րդ հոդվածում նշված ստուգումների և վերահսկողության նպատակներով ապացուցի, որ ձեռնարկել է սույն Հրահանգում թվարկված բոլոր անհրաժեշտ միջոցները:

Հոդված 6

Ծանուցում

1. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որ տնտեսավարող սուբյեկտը իրավասու մարմին ծանուցում ուղարկի հետևյալ ժամկետներում՝
 - նոր հաստատությունների դեպքում՝ նախքան դրանց կառուցումն սկսելը կամ գործարկումը՝ ողջամիտ ժամկետում.

- գործող հաստատությունների դեպքում՝ 24 (1) հոդվածով սահմանված օրվանից հետո մեկ տարվա ընթացքում.

▼M2

- սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավվելիք հաստատությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերության համաձայն՝ համապատասխան հաստատության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվան հաջորդող երեք ամսվա ընթացքում:

▼B

2. 1-ին պարբերությամբ պահանջվող ծանուցումը պետք է պարունակի հետևյալ մանրամասները՝

ա) տնտեսավարող սուբյեկտի անունը կամ առևտրային անունը և համապատասխան հաստատության ամբողջական հասցեն.

բ) տնտեսավարող սուբյեկտի գործունեության գրանցման վայրի ամբողջական հասցեն.

գ) հաստատության պատասխանատու անձի անունը և պաշտոնը՝ (ա) կետում նշվածից տարբեր լինելու դեպքում.

դ) վտանգավոր նյութերը կամ ներգրավված նյութերի կարգը որոշելու համար բավարար տեղեկատվություն.

ե) վտանգավոր նյութի կամ ներգրավված նյութերի քանակի և ֆիզիկական տեսքի վերաբերյալ.

զ) կայանքի կամ պահեստի գործունեության կամ առաջարկվող գործունեության վերաբերյալ.

է) հաստատության անմիջական միջավայրի վերաբերյալ (տարրեր, որոնք կարող են խոշոր վթարի պատճառ լինել կամ ծանրացնել դրա հետևանքները):

3. Այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտը գործող հաստատությունների համար իրավասու մարմնին ազգային իրավունքի պահանջների համաձայն և մինչ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու օրն արդեն իսկ ներկայացրել է 2-րդ պարբերությամբ

նախատեսված ամբողջ տեղեկատվությունը, ապա 1-ին պարբերությամբ նախատեսված ծանուցումը չի պահանջվում:

4. Հետևյալ՝

- առկա վտանգավոր նյութի քանակության էական աճի կամ դրա բնույթի, ֆիզիկական տեսքի էական փոփոխության, ինչպես նշված է 2-րդ պարբերության համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված ծանուցման մեջ, կամ դրա կիրառման հետ կապված ցանկացած փոփոխության դեպքում ►**M2**.

▼M2

- որևէ հաստատության կամ կայանքի ձևափոխության դեպքում, որն էական ազդեցություն կարող է ունենալ խոշոր վթարի վտանգի վրա կամ

▼B

- կայանքի մշտապես փակման դեպքում

տնտեսավարող սուբյեկտը պետք է իրավասու մարմնին անմիջապես տեղեկացնի իրադրության փոփոխության մասին:

Հոդված 7

Խոշոր վթարների կանխման քաղաքականություն

1. Անդամ պետությունները պետք է տնտեսավարող սուբյեկտից պահանջեն, որ նա խոշոր վթարների կանխման իր վարած քաղաքականության վերաբերյալ փաստաթուղթ կազմի և ապահովի դրա պատշաճ իրականացումը: Տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված խոշոր վթարների կանխման քաղաքականությունը պետք է նախատեսված լինի մարդու և շրջակա միջավայրի բարձր մակարդակով պաշտպանության ապահովման համար՝ համապատասխան միջոցներով, կառուցվածքներով և կառավարման համակարգերի միջոցով:

▼M2

1(ա). Սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավվելիք հաստատությունների դեպքում 1-ին պարբերության մեջ նշված փաստաթուղթը պետք է կազմվի անհապաղ, սակայն, բոլոր դեպքերում, համապատասխան հաստատության

նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից՝ երեք ամսվա ընթացքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերության համաձայն :

▼B

2. Փաստաթղթում պետք է հաշվի առնվեն III հավելվածում նշված սկզբունքները և դրանք հասանելի դարձվեն իրավասու մարմինների համար՝ ի թիվս այլոց, 5 (2) և 18-րդ հոդվածների իրականացման նպատակով:

3. Սույն հոդվածը չի կիրառվում 9-րդ հոդվածում նշված հաստատությունների նկատմամբ:

Հոդված 8

Շղթայական ազդեցություն/ դոմինոյի էֆեկտ

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինը, օգտվելով 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված տեղեկատվությունից, որոշի այն հաստատությունները կամ հաստատությունների խմբերը, որտեղ կարող են ավելանալ խոշոր վթարների հետևանքները կամ դրանց հավանականությունն ու հնարավորությունը՝ պայմանավորված այդպիսի հաստատությունների գտնվելու վայրով և իրար մոտ լինելու հանգամանքով:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այդպիսով նույնացված հաստատությունների դեպքում՝

ա) պատշաճ կերպով համապատասխան տեղեկատվություն փոխանակվի, որը հնարավորություն կտա այդ հաստատություններին խոշոր վթարների կանխման իրենց քաղաքականության մեջ, անվտանգության կառավարման համակարգերում, անվտանգության վերաբերյալ հաշվետվություններում և ներքին արտակարգ իրավիճակների ծրագրերում հաշվի առնել խոշոր վթարի ամբողջ վտանգն իր բնույթով և չափով.

▼M2

բ) դրույթ նախատեսվի՝ հասարակությանը տեղեկացնելու և արտաքին արտակարգ իրավիճակների ծրագրերի կազմման համար պատասխանատու մարմինն տեղեկատվություն տրամադրելու գործում համագործակցելու վերաբերյալ:

Հոդված 9

Անվտանգության վերաբերյալ հաշվետվություն

1. Անդամ պետությունները պետք է տնտեսավարող սուբյեկտից պահանջեն, որ նա անվտանգության վերաբերյալ հաշվետվություն պատրաստի՝ հետևյալ նպատակներով՝
- ա) ցույց տալու համար, որ խոշոր վթարների կանխման քաղաքականությունը և դրա իրականացման համար անհրաժեշտ անվտանգության կառավարման համակարգը գործողության մեջ է դրվել՝ համաձայն III հավելվածով սահմանված տեղեկատվության.
 - բ) ցույց տալու համար, որ բացահայտվել են խոշոր վթարների վտանգները և ձեռք են առնվել այդօրինակ վթարները կանխելու և մարդկանց, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքները սահմանափակելու համար անհրաժեշտ միջոցները.
 - գ) ցույց տալու համար, որ հաստատության ներսում խոշոր վթարների վտանգների հետ առնչություն ունեցող ցանկացած կայանքի, պահեստի, սարքավորման և վերջինիս գործարկման հետ կապված ենթակառուցվածի նախագծման, կառուցման, շահագործման և սպասարկման ժամանակ ապահովված է համապատասխան անվտանգություն և հուսալիություն.
 - դ) ցույց տալու համար, որ կազմվել են ներքին արտակարգ իրավիճակի ծրագրեր և տրամադրվել է տեղեկատվություն, որը թույլ կտա կազմել արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիր՝ խոշոր վթարի դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար.
 - ե) իրավասու մարմիններին բավականաչափ տեղեկատվություն տրամադրելու համար, որպեսզի նրանք կարողանան որոշումներ կայացնել գործող հաստատությունների շրջակայքում նոր ձեռնարկություններ կամ կառույցներ տեղակայելու վերաբերյալ:

▼M2

2. Անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարունակի առնվազն II հավելվածում թվարկված տվյալները և տեղեկատվությունը: Դրանում պետք է նշվեն հաշվետվության կազմման գործընթացում ներգրավված համապատասխան կազմակերպությունների անունները: Այն պետք է նաև պարունակի հաստատությունում առկա վտանգավոր նյութերի թարմացված ցանկ:

▼B

Այլ օրենքներին ի պատասխան կազմված անվտանգության վերաբերյալ հաշվետվությունները կամ դրանց որոշակի մասերը և կամ ցանկացած այլ համարժեք հաշվետվություն կարող են միավորվել՝ սույն հոդվածի նպատակով մեկ ամբողջական անվտանգության հաշվետվություն կազմելու համար, քանի որ այդ ձևաչափի շնորհիվ կարելի է խուսափել տեղեկատվության ավելորդ կրկնօրինակումից և տնտեսավարող սուբյեկտի կամ իրավասու մարմնի կողմից աշխատանքի կրկնողությունից՝ պայմանով, որ կբավարարվեն սույն հոդվածի բոլոր պահանջները:

3. 1-ին պարբերությամբ նախատեսված անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը պետք է ուղարկվի իրավասու մարմին հետևյալ ժամկետներում՝

- նոր հաստատությունների դեպքում՝ նախքան դրանց կառուցումն սկսելը կամ գործարկումը՝ ողջամիտ ժամկետում.
- գործող այն հաստատությունների դեպքում, որոնք նախկինում չեն կարգավորվել 82/501/ԵՏՀ հրահանգով՝ 24 (1) հոդվածով սահմանված օրվանից հետո երեք տարվա ընթացքում.
- այլ հաստատությունների դեպքում՝ 24(1) հոդվածով սահմանված օրվանից հետո երկու տարվա ընթացքում.

▼M2

- սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավվելիք հաստատությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով՝ անհապաղ, այնուամենայնիվ, համապատասխան

հաստատության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից՝ մեկ տարվա ընթացքում.

▼B

- 5-րդ պարբերությամբ նախատեսված պարբերական վերանայումների դեպքում՝ անհապաղ:

4. Նախքան տնտեսավարող սուբյեկտի կողմից շինարարությունն սկսելը կամ գործունեություն ծավալելը և կամ 3-րդ պարբերության երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերությամբ նշված դեպքերում՝ ►M2 իրավասու մարմինը պետք է հաշվետվությունն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում՝

- տնտեսավարող սուբյեկտին ներկայացնի անվտանգության վերաբերյալ հաշվետվության ուսումնասիրության արդյունքում իր կողմից արված եզրակացությունները՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով լրացուցիչ տեղեկություններ կամ
- արգելի համապատասխան հաստատության գործարկումը կամ շարունակական գործածումը՝ 17-րդ հոդվածով սահմանված իրավասությունների և ընթացակարգերի համաձայն:

5. Անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարբերաբար վերանայվի և անհրաժեշտության դեպքում թարմացվի՝

- առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ.
- ցանկացած այլ ժամանակ՝ տնտեսավարող սուբյեկտի նախաձեռնությամբ կամ իրավասու մարմնի պահանջով, նոր փաստերով հիմնավորված լինելու դեպքում կամ անվտանգության խնդիրների վերաբերյալ տեխնիկական նոր գիտելիքները հաշվի առնելու նպատակով, որոնք կարող են ի հայտ գալ, օրինակ, պատահարների կամ հնարավորության դեպքում՝ «վթարի նախադրյալների» վերլուծությունների և վտանգների գնահատման հետ կապված իմացությունների կատարելագործման արդյունքում:

6. (ա) Այն դեպքում, երբ իրավասու մարմին ներկայացվել են բավարար ապացույցներ այն մասին, որ հաստատությունում կամ դրա որևէ բաժնում առկա որոշակի

նյութերն անկարող են խոշոր վթարներ առաջացնել, ապա անդամ պետությունը կարող է, (բ) ենթապարբերության մեջ նշված չափորոշիչի համաձայն, անվտանգության վերաբերյալ հաշվետվությամբ պահանջվող տեղեկատվությունը սահմանափակել արտադրական թափոնների հետևանքով առաջացող խոշոր վթարների վտանգների կանխման, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի վրա դրանց հետևանքների սահմանափակմանը վերաբերող խնդիրներով:

▼M3

բ) Հանձնաժողովը պետք է ներդաշնակ չափորոշիչներ սահմանի իրավասու մարմնի այն որոշումների համար, համաձայն որոնց որևէ հաստատություն, (ա) ենթապարբերության իմաստով, ընդունակ չէ խոշոր վթարներ ստեղծել: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 22(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

գ) Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինը Հանձնաժողով ներկայացնի համապատասխան հաստատությունների ցանկը՝ հիմնավորումներով: Հանձնաժողովն այդ ցանկերն ամեն տարի պետք է փոխանցի 22-րդ հոդվածում նշված Կոմիտեին:

▼M2

դ) Հանձնաժողովը մինչ 2006 թվականի դեկտեմբերի 31-ը հրավիրվում է վերանայելու առկա «Անվտանգության վերաբերյալ հաշվետվության կազմման ուղեցույցը»՝ սերտորեն համագործակցելով անդամ պետությունների հետ:

▼B

Հոդված 10

Կայանքի, հաստատության կամ պահեստի ձևափոխություն

Կայանքի, հաստատության, պահեստի ձևափոխության կամ վտանգավոր նյութերի բնույթի կամ քանակության հետ կապված պրոցեսների փոփոխության դեպքերում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ խոշոր վթարների վտանգի վրա, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տնտեսավարող սուբյեկտը՝

- վերանայի խոշոր վթարների կանխման իր քաղաքականությունը, կառավարման համակարգերը, 7-րդ և 9-րդ հոդվածներում նշված ընթացակարգերը և անհրաժեշտության դեպքում վերամշակի դրանք.
- վերանայի անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը, անհրաժեշտության դեպքում վերամշակի այն և այդ մշակման մանրամասների մասին տեղեկացնի 16-րդ հոդվածում նշված իրավասու մարմնին՝ նախքան փոփոխություններ կատարելը:

Հոդված 11

Արտակարգ իրավիճակների ծրագրեր

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այն բոլոր հաստատությունների համար, որոնց նկատմամբ կիրառվում է 9-րդ հոդվածը՝

ա) տնտեսավարող սուբյեկտը կազմի ներքին արտակարգ իրավիճակի ծրագիր՝ հաստատության ներսում միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ.

- նոր հաստատությունների դեպքում՝ նախքան գործարկումը.
- գործող այն հաստատությունների դեպքում, որոնք նախկինում չեն կարգավորվել թիվ 82/501/ԵՏՀ հրահանգով՝ 24(1) հոդվածով սահմանված օրվանից հետո երեք տարվա ընթացքում.
- այլ հաստատությունների դեպքում՝ 24(1) հոդվածով սահմանված օրվանից հետո երկու տարվա ընթացքում.

▼M2

- սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավվելիք հաստատությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով՝ անհապաղ, այնուամենայնիվ, համապատասխան

հաստատության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում.

▼B

- բ) տնտեսավարող սուբյեկտը իրավասու մարմիններին ներկայացնի անհրաժեշտ տեղեկատվություն՝ վերջիններիս հնարավորություն տալով կազմելու արտաքին արտակարգ իրավիճակների ծրագրեր՝ հետևյալ ժամկետներում՝
- նոր հաստատությունների դեպքում՝ նախքան գործարկումը.
 - գործող այն հաստատությունների դեպքում, որոնք նախկինում չեն կարգավորվել թիվ 82/501/ԵՏՀ հրահանգով՝ 24 (1) հոդվածով սահմանված օրվանից հետո երեք տարվա ընթացքում.
 - այլ հաստատությունների դեպքում՝ 24(1) հոդվածով սահմանված օրվանից հետո երկու տարվա ընթացքում.

▼M2

- սույն Հրահանգի գործողության ոլորտի մեջ հետագայում ներգրավվելիք հաստատությունների դեպքում՝ 2(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ սահմանված կարգով՝ անհապաղ, այնուամենայնիվ , համապատասխան հաստատության նկատմամբ սույն Հրահանգի կիրառման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում.

▼B

- գ) անդամ պետությունների կողմից այդ նպատակով նշանակված մարմինները կազմեն արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիր՝ հաստատությունից դուրս միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ.
2. Արտակարգ իրավիճակների ծրագրերը պետք է կազմվեն հետևյալ նպատակներով՝
- պարունակեն պատահարների և դրանց վերահսկման վերաբերյալ տեղեկատվություն, մարդկանց և շրջակա միջավայրին ու գույքին հասցվելիք վնասը սահմանափակելու և ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար.

- իրականացնեն անհրաժեշտ միջոցառումներ՝ մարդկանց և շրջակա միջավայրը խոշոր վթարների ազդեցությունից պաշտպանելու համար.
- անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդեն հանրությանը, ինչպես նաև այդ ոլորտի հետ առնչվող ծառայություններին ու մարմիններին.
- խոշոր վթարից հետո ապահովեն շրջակա միջավայրի վերականգնումն ու մաքրումը:

Արտակարգ իրավիճակների ծրագրերը պետք է պարունակեն IV հավելվածով սահմանված տեղեկատվությունը:

▼M2

3. Չհակասելով իրավասու մարմինների պարտավորություններին՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ սույն Հրահանգով նախատեսված ներքին արտակարգ իրավիճակի ծրագրերը կազմելիս խորհրդակցվել է հաստատության ներսում աշխատող անձնակազմի, այդ թվում նաև՝ երկարաժամկետ համապատասխան ենթապայմանագրերով աշխատող անձնակազմի հետ, իսկ արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրերը մշակելիս կամ թարմացնելիս՝ հանրության հետ:

▼B

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն տնտեսավարող սուբյեկտների և լիազորված մարմինների կողմից ներքին ու արտաքին արտակարգ իրավիճակների ծրագրերի վերանայումը, փորձարկումը և, անհրաժեշտության դեպքում, վերամշակումն ու թարմացումը՝ համապատասխան, սակայն երեք տարին չգերազանցող ժամանակահատվածում: Վերանայման ընթացքում պետք է հաշվի առնվեն համապատասխան հաստատությունում կամ արտակարգ իրավիճակների ծառայություններում կատարված փոփոխությունները, նոր տեխնիկական և խոշոր վթարներին հակազդելու վերաբերյալ գիտելիքները:

▼M2

4 (ա) Անդամ պետությունները արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրերի առնչությամբ պետք է հաշվի առնեն խոշոր արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական պաշտպանության աջակցության գործում ընդլայնված համագործակցության խթանման անհրաժեշտությունը:

▼B

5. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ արտակարգ իրավիճակների ծրագրերը տնտեսավարող սուբյեկտի և կամ անհրաժեշտության դեպքում այդ նպատակով նշանակված իրավասու մարմնի կողմից անհապաղ գործողության մեջ դրվեն՝

- խոշոր վթարի դեպքում կամ
- անվերահսկելի իրադարձության դեպքում, որը կարելի է իրատեսորեն ակնկալել, որ իր բնույթով կարող է հանգեցնել խոշոր վթարի:

6. Իրավասու մարմինը, հաշվի առնելով անվտանգության վերաբերյալ հաշվետվության մեջ զետեղված տեղեկատվությունը, կարող է որոշել, որ 1-ին պարբերությամբ նախատեսված արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիր կազմելու պահանջը չի կիրառվում և հիմնավորել այդ որոշումը:

Հոդված 12

Հողօգտագործման պլանավորում

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հողօգտագործման պլանավորման իրենց քաղաքականության և (կամ) այլ համապատասխան քաղաքականության մեջ հաշվի առնվեն խոշոր վթարների կանխման և այդօրինակ վթարների հետևանքների սահմանափակման հետ կապված նպատակները: Նրանք հետամուտ պետք է լինեն այդ նպատակների իրականացմանը՝ վերահսկելով հետևյալը՝

ա) նոր հաստատությունների տեղակայումը.

բ) գործող հաստատությունների հետ կատարված փոփոխությունները, որոնք կարգավորվում են 10-րդ հոդվածով.

գ) գործող հաստատությունների հարևանությամբ գտնվող նոր կառույցները, ինչպիսիք են տրանսպորտային հանգույցները, հասարակության կողմից հաճախ օգտագործվող շինությունները և բնակելի գոտիները, այն դեպքում, երբ այդ կառույցներն այնպես

են տեղակայված, որ կարող են ավելացնել խոշոր վթարի վտանգն ու դրա հետևանքները:

▼M2

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց հողօգտագործման և (կամ) այլ համապատասխան քաղաքականության մեջ, ինչպես նաև այն իրականացնելու համար նախատեսված ընթացակարգերում երկարատև ժամկետով հաշվի առնվի սույն Հրահանգով կարգավորվող հաստատությունների և բնակելի տարածքների, հասարակական օգտագործման տարածքների և շինությունների, հնարավորության դեպքում գլխավոր տրանսպորտային ճանապարհների, հանգստի և զվարճանքի ոլորտին վերաբերող տարածքների, բնության տեսակետից հատուկ հետաքրքրություն ներկայացնող կամ զգայուն գոտիների միջև համապատասխան հեռավորություն պահպանելու անհրաժեշտությունը, իսկ գործող հաստատությունների դեպքում հաշվի առնվեն հավելյալ տեխնիկական միջոցներ՝ 5-րդ հոդվածի համաձայն և մարդկանց համար վտանգը չավելացնելու նպատակով:

▼M2

1(ա) Հանձնաժողովը մինչ 2006 թվականի դեկտեմբերի 31-ը հրավիրվում է անդամ պետությունների հետ սերտ համագործակցության արդյունքում կազմելու տվյալների բազա սահմանող ուղեցույց, որը վտանգի վերաբերյալ տեղեկատվություն և վտանգի սցենարներ կներառի, որոնք կարող են օգտագործվել սույն Հրահանգով կարգավորվող հաստատությունների և 1-ին պարբերության մեջ նկարագրված տարածքների համատեղելիությունը որոշելիս: Այդ տվյալների բազան սահմանելիս պետք է հնարավորինս հաշվի առնվեն իրավասու մարմինների կողմից կատարված գնահատումները, տնտեսավարող սուբյեկտի կողմից ստացված, ինչպես նաև բոլոր մյուս համապատասխան տեղեկությունները, օրինակ՝ կառույցի սոցիալ-տնտեսական արտոնությունների և արտակարգ իրավիճակների ծրագրերի մեղմացուցիչ ազդեցությունների վերաբերյալ:

▼B

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինները և քաղաքաշինական մարմինները, որոնք պատասխանատու են այս ոլորտին առնչվող

որոշումներ կայացնելու համար, կազմակերպեն համապատասխան խորհրդատվության տրամադրման ընթացակարգեր՝ 1-ին պարբերությամբ նախատեսված քաղաքականության իրականացմանը նպաստելու համար: Ընթացակարգերը պետք է ծրագրված լինեն այնպես, որ որոշումներ կայացնելիս ապահովեն հաստատության դեպքում ենթադրվող վտանգների վերաբերյալ տեխնիկական խորհրդատվության անցկացում՝ հիմնված կոնկրետ կամ ընդհանրական դեպքերի վրա:

Հոդված 13

Անվտանգության միջոցների վերաբերյալ տեղեկատվություն

▼M2

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մարդկանց և հասարակությանը սպասարկող հաստատությունները (ինչպիսիք դպրոցները և հիվանդանոցներն են), որոնք կարող են ենթարկվել 9-րդ հոդվածով կարգավորվող հաստատություններում սկիզբ առած խոշոր վթարի ազդեցությանը, առանց վերջիններիս պահանջի, վթարի դեպքում պարբերաբար և առավել նպատակահարմար կերպով անվտանգության միջոցների և անհրաժեշտ վարքագծի մասին տեղեկատվություն տրամադրվի:

▼B

Տեղեկատվությունը պետք է վերանայվի յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում կրկնվի և թարմացվի՝ առնվազն 10-րդ հոդվածի իմաստով կատարված ցանկացած փոփոխության դեպքում: Տեղեկատվությունը նաև պետք է մշտապես մատչելի դարձվի հասարակության համար: Տեղեկատվությունը հասարակությանը նորից պետք է տրամադրվի, այնուամենայնիվ, հինգ տարուց ոչ ուշ:

Այդ տեղեկատվությունն առնվազն պետք է պարունակի V հավելվածում թվարկված տեղեկությունները:

2. Անդամ պետությունները, որևէ հաստատության ներսում սկիզբ առած խոշոր վթարի անդրսահմանային ազդեցության հավանականության առնչությամբ պետք է հնարավոր ազդեցության ենթարկվելիք անդամ պետություններին 9-րդ հոդվածի

համաձայն ապահովեն բավարար տեղեկատվությամբ, որպեսզի ազդեցության ենթարկված անդամ պետությունները համապատասխան դեպքերում կիրառեն 11-րդ, 12-րդ հոդվածներում, ինչպես նաև սույն հոդվածում գետեղված բոլոր համապատասխան դրույթները:

3. Այն դեպքում, երբ համապատասխան անդամ պետությունը որոշում է, որ մեկ այլ անդամ պետության տարածքին մոտ գտնվող հաստատությունը 11(6) հոդվածի իմաստով չի կարող խոշոր վթարի վտանգ ներկայացնել և հետևաբար չի պահանջվում կազմել 11(1) հոդվածով նախատեսված արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիր, ապա այն դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությանը:

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն անվտանգության վերաբերյալ հաշվետվության հանրության համար մատչելիությունը: Տնտեսավարող սուբյեկտը կարող է խնդրանքով դիմել իրավասու մարմնին, որպեսզի այն հանրության համար չբացահայտի հաշվետվության որոշ հատվածներ՝ արտադրական, կոմերցիոն և անձնական գաղտնիության, հասարակության անվտանգության կամ ազգային պաշտպանության պատճառներով: Իրավասու մարմնի կողմից համաձայնություն ստանալու նմանատիպ դեպքերում տնտեսավարող սուբյեկտը իրավասու մարմին պետք է ներկայացնի հաշվետվության փոփոխված տարբերակը, որից հանված կլինեն այդ խնդիրները և այն տրամադրի հասարակությանը:

5. Անդամ պետությունները պետք է ապահովեն հետևյալի վերաբերյալ հասարակության կողմից կարծիք արտահայտելու հնարավորությունը՝

- նոր հաստատությունների պլանավորում, որը կարգավորվում է 9-րդ հոդվածով.
- գործող հաստատությունների 10-րդ հոդվածով սահմանված փոփոխություններն այն դեպքում, երբ պլանավորմանն առնչվող այդ փոփոխությունները նախատեսված են սույն Հրահանգով.
- այդօրինակ գործող հաստատությունների շրջակայքում գտնվող կառույցներ:

▼M2

6. Այն դեպքում, երբ հաստատությունների նկատմամբ գործում են 9-րդ հոդվածի դրույթները, անդամ պետությունները պետք է ապահովեն 9(2) հոդվածով նախատեսված

վտանգավոր նյութերի ցանկի՝ հանրության համար մատչելիությունը՝ պահպանելով սույն հոդվածի 4-րդ պարբերության և 20-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 14

խոշոր վթարից հետո տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացվող տեղեկատվությունը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ խոշոր վթարից հետո տնտեսավարող սուբյեկտից հնարավորինս շուտ պահանջվի, որպեսզի այն առավել նպատակահարմար կերպով՝

ա) տեղեկացնի իրավասու մարմիններին.

բ) նրանց տրամադրի հետևյալ տեղեկատվությունը, այն մատչելի դառնալուց անմիջապես հետո՝

- վթարի հանգամանքներ. -
- ներգրավված վտանգավոր նյութեր.
- մարդկանց և շրջակա միջավայրի վրա վթարի ազդեցության գնահատման համար անհրաժեշտ առկա տվյալներ.
- ձեռնարկված արտակարգ միջոցներ.

գ) նրանց տեղեկացնի նախատեսված քայլերի մասին՝ ուղղված՝

- վթարների միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունների մեղմացմանը.
- նմանատիպ վթարի կրկնության կանխմանը.

դ) թարմացնի տեղեկատվությունն այն դեպքում, երբ հետագա ուսումնասիրության արդյունքում պարզվում են հավելյալ փաստեր, որոնք կարող են փոփոխել այդ տեղեկատվությունը կամ եզրակացությունները:

2. Անդամ պետություններն իրավասու մարմնից պետք է պահանջեն՝

ա) ապահովել անհրաժեշտ ցանկացած հրատապ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ միջոցների ձեռնարկումը.

բ) քննության, ուսումնասիրության կամ այլ համապատասխան միջոցներով հավաքել այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է՝ խոշոր վթարի, տեխնիկական, կազմակերպչական և կառավարման հետ առնչվող հանգամանքների ամբողջական վերլուծության համար.

գ) ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ ապահովելու համար տնտեսավարող սուբյեկտի կողմից վնասը վերացնելուն ուղղված անհրաժեշտ միջոցների իրականացումը և

դ) առաջարկություններ ներկայացնել հետագա կանխարգելիչ միջոցների վերաբերյալ:

Հոդված 15

Անդամ պետությունների կողմից Հանձնաժողովին ներկայացվող տեղեկատվությունը

1. Խոշոր վթարների կանխման և մեղմացման նպատակով անդամ պետությունները Հանձնաժողովին հնարավորինս շուտ պետք է տեղեկացնեն իրենց տարածքում տեղի ունեցած խոշոր վթարների մասին՝ բավարարելով VI հավելվածի չափորոշիչները: Նրանք այդ տեղեկատվությունը պետք է տրամադրեն հետևյալ մանրամասներով՝

ա) անդամ պետությունը, հաշվետվության համար պատասխանատու մարմնի հասցեն և անվանումը.

բ) խոշոր վթարի առաջացման օրը, ժամը և վայրը՝ ներառյալ տնտեսավարող սուբյեկտի ամբողջական անվանումը և ներգրավված հաստատության հասցեն.

գ) վթարի հանգամանքների, այդ թվում նաև ներգրավված վտանգավոր նյութերի, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի վրա վթարի անմիջական ազդեցության համառոտ նկարագրությունը.

դ) ձեռնարկված արտակարգ միջոցների և վթարի կրկնության կանխման համար անհրաժեշտ անմիջական նախազգուշական միջոցների համառոտ նկարագրությունը:

▼M3

2. Անդամ պետությունները, 14-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվությունը հավաքելուն պես, պետք է Հանձնաժողովին տեղեկացնեն իրենց վերլուծության

արդյունքների և առաջարկությունների մասին՝ օգտագործելով 22(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն կազմված և վերահսկվող հաշվետվության ձևաթղթերը:

Անդամ պետությունների կողմից այդ տեղեկատվության տրամադրումը կարող է հետաձգվել միայն իրավական վարույթները ավարտին հասցնելու նպատակով, եթե դրա տրամադրումը կարող է ներգործություն ունենալ այդ վարույթների վրա:

▼B

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է հայտնեն ցանկացած մարմնի անվանումն ու հասցեն, եթե հնարավոր է, որ վերջինս տիրապետում է խոշոր վթարների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության և կարող է դրա մասին խորհրդատվություն տրամադրել այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին, որոնք պետք է միջամտեն այդօրինակ վթարների դեպքում:

Հոդված 16

Իրավասու մարմինը

Չհակասելով տնտեսավարող սուբյեկտի պարտավորություններին՝անդամ պետությունները պետք է կազմավորեն կամ նշանակեն իրավասու մարմին կամ մարմիններ, որոնք կպարտավորվեն կատարել սույն Հրահանգով սահմանված պարտականությունները, իսկ անհրաժեշտության դեպքում կազմավորեն կամ նշանակեն մարմիններ՝իրավասու մարմին կամ մարմիններին տեխնիկական մակարդակով աջակցելու համար:

Հոդված 17

Գործածման արգելքը

1. Անդամ պետությունները պետք է արգելեն ցանկացած հաստատության, կայանքի կամ պահեստի, և կամ դրանց որևէ հատվածի գործածումն ու գործարկումն այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտի կողմից ձեռնարկված խոշոր վթարների կանխմանն ու մեղմացմանն ուղղված միջոցներն էապես թերի են եղել:

Անդամ պետությունները կարող են արգելել ցանկացած հաստատության, կայանքի կամ պահեստի և կամ դրանց որևէ հատվածի գործածումն ու գործարկումը, եթե տնտեսավարող սուբյեկտը սահմանված ժամկետում ծանուցում, հաշվետվություններ կամ սույն Հրահանգով պահանջվող այլ տեղեկատվություն չի ներկայացրել:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տնտեսավարող սուբյեկտները կարողանան բողոքարկել իրավասու մարմնի՝ 1-ին պարբերության համաձայն կայացրած արգելքի վերաբերյալ կարգադրությունը ազգային իրավունքով և ընթացակարգերով սահմանված համապատասխան մարմիններում:

Հոդված 18

Ստուգումները

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինները ծրագրեն ստուգումների համակարգ կամ տվյալ հաստատության տեսակին համապատասխանող վերահսկողության միջոցներ: Այդ ստուգումները կամ վերահսկողության միջոցները չպետք է կախված լինեն անվտանգության վերաբերյալ կամ ցանկացած այլ հաշվետվության ներկայացված լինելու հանգամանքից: Այդօրինակ ստուգումները կամ մյուս վերահսկողության միջոցները պետք է բավարար հիմք լինեն հաստատությունում կիրառվող տեխնիկական, կազմակերպչական կամ կառավարման բնույթի համակարգերի ծրագրված և սիստեմատիկ քննության համար, մասնավորապես, հետևյալն ապահովելու համար՝

- որպեսզի տնտեսավարող սուբյեկտը կարողանա ցույց տալ, որ խոշոր վթարների կանխման նպատակով հաստատությունում ներգրավված գործունեության տարբեր տեսակների առնչությամբ իր կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ.
- որպեսզի տնտեսավարող սուբյեկտը կարողանա ցույց տալ, որ խոշոր վթարների հետևանքների սահմանափակման համար իր կողմից ապահովվել են համապատասխան միջոցներ, ինչպես հաստատության ներսում, այնպես էլ դրանից դուրս.

- որպեսզի անվտանգության վերաբերյալ կամ ցանկացած այլ ներկայացված հաշվետվության մեջ զետեղված տվյալները և տեղեկատվությունը համարժեք կերպով արտացոլեն հաստատության պայմանները.
- որպեսզի տեղեկատվություն տրամադրվի հասարակությանը՝ 13(1) հոդվածին համապատասխան:

2. Ստուգման համակարգը, որի մասին նշված է 1-ին պարբերության մեջ, պետք է համապատասխանի հետևյալ պայմաններին՝

ա) բոլոր հաստատությունների համար պետք է նախատեսված լինեն ստուգումների ծրագրեր: Եթե իրավասու մարմինը չի կազմել կոնկրետ հաստատության համար խոշոր վթարի վտանգների սիստեմատիկ գնահատման վրա հիմնված ստուգումների ծրագիր, ապա այդ ծրագիրը պետք է ենթադրի 9-րդ հոդվածով կարգավորվող յուրաքանչյուր հաստատության ներսում ամեն տասներկու ամիսը մեկ անգամ իրավասու մարմնի կողմից անցկացվող առնվազն մեկ ստուգում.

բ) յուրաքանչյուր ստուգմանը պետք է հետևի իրավասու մարմնի կողմից պատրաստված հաշվետվություն.

գ) իրավասու մարմնի կողմից իրականացված յուրաքանչյուր ստուգում, անհրաժեշտության դեպքում, պետք է ավարտին հասցվի հաստատության ղեկավարության կողմից՝ ստուգումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Իրավասու մարմինը կարող է տնտեսավարող սուբյեկտից պահանջել, որ նա ապահովի հավելյալ անհրաժեշտ տեղեկատվություն, որն իրավասու մարմնին թույլ կտա լիարժեք գնահատել խոշոր վթարների հնարավորությունը, ինչպես նաև որոշել այդ վթարների հնարավոր ավելացած հավանականության և (կամ) վատթարացման շրջանակները, որն էլ թույլ կտա կազմել արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիր և հաշվի առնել այն նյութերը, որոնք կարող են պահանջել լրացուցիչ ուսումնասիրություն՝ պայմանավորված դրանց ֆիզիկական տեսքով, հատուկ պայմաններով և գտնվելու վայրով:

Տեղեկատվական համակարգը և տեղեկատվության փոխանակումը

1. Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է տեղեկատվություն փոխանակեն՝ հիմնվելով խոշոր վթարների կանխման և դրա հետևանքների սահմանափակման առնչությամբ ձեռք բերված փորձի վրա: Այդ տեղեկատվությունը պետք է վերաբերի, մասնավորապես, սույն Հրահանգով նախատեսված միջոցների գործարկմանը:

▼M2

1. (ա) Անդամ պետությունները, սույն Հրահանգով կարգավորվող հաստատությունները պետք է Հանձնաժողովին տրամադրեն առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

ա) տնտեսավարող սուբյեկտի անունը կամ առևտրային անվանումը և համապատասխան հաստատության ամբողջական հասցեն և

բ) հաստատության գործունեության կամ գործունեության տեսակների վերաբերյալ:

Հանձնաժողովը պետք է կազմի անդամ պետության կողմից տրամադրված տեղեկատվություն պարունակող տվյալների բազա և թարմացնի այն: Տվյալների բազա մուտք գործելու իրավունքը պետք է վերապահվի Հանձնաժողովի կամ անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից լիազորված անձանց:

▼B

2. Հանձնաժողովը պետք է կազմի և անդամ պետություններին տրամադրի, մասնավորապես, անդամ պետությունների տարածքում տեղի ունեցած խոշոր վթարների վերաբերյալ մանրամասներ պարունակող գրանցամատյան և տեղեկատվական համակարգ՝ հետևյալ նպատակներով՝

ա) անդամ պետությունների կողմից 15(1) հոդվածի համաձայն տրամադրված տեղեկատվությունը՝ բոլոր իրավասու մարմինների շրջանակում արագ տարածելու համար.

բ) խոշոր վթարների պատճառների վերլուծությունը և դրանցից քաղված դասերը՝ իրավասու մարմիններին բաշխելու համար.

գ) կանխարգելիչ միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը իրավասու մարմիններին տրամադրելու համար.

դ) խոշոր վթարների դեպքերի, կանխման և մեղմացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվական ծառայություն մատուցելու իրավազոր կազմակերպությունների մասին տեղեկատվություն տրամադրելու համար:

Գրանցամատյանը և տեղեկատվական համակարգը պետք է պարունակեն առնվազն հետևյալը՝

ա) անդամ պետությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ 15(1) հոդվածին համապատասխան.

բ) վթարների պատճառների վերլուծություն.

գ) վթարներից քաղված դասեր,

դ) վթարների կրկնության կանխման համար անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ:

3. Չհակասելով 20-րդ հոդվածին՝ գրանցամատյանի և տեղեկատվական համակարգի մատչելիությունը պետք է հասու լինի անդամ պետությունների կառավարական մարմիններին, արդյունաբերական կամ առևտրային միություններին, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպություններին և այլ միջազգային կամ այդ ոլորտի հետազոտությամբ զբաղվող կազմակերպություններին:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին պետք է տրամադրեն 6-րդ և 9-րդ հոդվածներով կարգավորվող հաստատությունների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն՝ Շրջակա միջավայրին առնչվող կոնկրետ հրահանգների իրականացման մասին ստանդարտացման և ռացիոնալիզացման հաշվետվությունների մասին Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի 91/692/ԵՏՀ հրահանգով սահմանված ընթացակարգի համաձայն: Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ Հանձնաժողովը պետք է հրատարակի այդ տեղեկատվության համառոտ տարբերակը:

Հոդված 20

Գաղտնիությունը

1. Անդամ պետությունները թափանցիկություն ապահովելու նպատակով պետք է իրավասու մարմիններից պահանջեն, որ վերջիններս սույն Հրահանգին համապատասխան ստացված տեղեկատվությունը տրամադրեն ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ վերջիններիս պահանջի դեպքում:

Իրավասու մարմինների կամ Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տեղեկատվությունը, ազգային դրույթների համաձայն պահանջվելու դեպքում, կարող է գաղտնի պահվել, եթե կասկածի տակ չեն դրվում՝

- իրավասու մարմինների և Հանձնաժողովի քննարկումների գաղտնիությունը.
- միջազգային հարաբերությունների և ազգային պաշտպանության գաղտնիությունը.
- հասարակության անվտանգությունը.
- նախնական հետաքննության կամ ընթացիկ իրավաբանական վարույթների գաղտնիությունը.
- կոմերցիոն և արդյունաբերական, ինչպես նաև մտավոր սեփականության հետ կապված գաղտնիքները.
- անձնական տվյալներ և (կամ) գործեր.
- երրորդ կողմի տրամադրած տվյալները, եթե վերջինս խնդրել է այն գաղտնի պահել:

2. Սույն Հրահանգը չպետք է խոչընդոտի անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրերի կնքումը, որոնց համար այն ներքին մակարդակով գաղտնի է:

▼M3

Հոդված 21

Կոմիտեի իրավասությունները

1. Հանձնաժողովը 9(6)(բ) հոդվածում, ինչպես նաև II և VI հավելվածներում նշված չափորոշիչները հարմարեցնում է տեխնիկական առաջընթացին:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 22(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. Ձևաթուղթ կազմելու միջոցառումը, որի մասին նշված է 15(2) հոդվածում, ընդունվում է 22(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգերին համապատասխան:

Article 22

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 23

82/501/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչելը

1. 82/501/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու պահից 24 ամիս անց:

2. Ծանուցումները, արտակարգ իրավիճակների ծրագրերը և հասարակության համար նախատեսված տեղեկատվությունը, որոնք ներկայացվել կամ կազմվել են 82/501/ԵՏՀ հրահանգին համապատասխան, մնում են ուժի մեջ մինչ այդ ժամկետը, քանի որ դրանք պետք է փոխարինվեն սույն Հրահանգի համապատասխան դրույթներով:

Հոդված 24

Կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան այն ուժի մեջ մտնելուց հետո 24 ամսվա ընթացքում: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ներպետական իրավունքի հիմնական դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 25

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների Պաշտոնական տեղեկագրում հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 26

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Հավելվածների ցանկը

- Հավելված I* – Հրահանգի կիրառումը
- Հավելված II* – Նվազագույն տվյալներն ու տեղեկատվությունը, որոնք պետք է դիտարկվեն 9-րդ հոդվածում նշված անվտանգության վերաբերյալ հաշվետվության մեջ
- Հավելված III* – Կառավարման համակարգի և հաստատությունների ձևավորման վերաբերյալ 7-րդ հոդվածում նշված սկզբունքները և 9-րդ հոդվածում նշված տեղեկատվությունը՝ խոշոր վթարների կանխման առնչությամբ:
- Հավելված IV* – Արտակարգ իրավիճակների ծրագրերում ներառվելիք, 11-րդ հոդվածում նշված, տվյալները և տեղեկատվությունը:
- Հավելված V* – Հասարակությանը 13 (1) հոդվածի համաձայն տրամադրվելիք տեղեկատվության կետերը:
- Հավելված VI* – Հանձնաժողովին վթարի մասին ծանուցելու՝ 15 (1) հոդվածով նախատեսված չափորոշիչները:
-

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՀՐԱՀԱՆԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն հավելվածը կիրառվում է ցանկացած հաստատությունում սույն Հրահանգի 3-րդ հոդվածի իմաստով առկա վտանգավոր նյութերի նկատմամբ և այդուհանդերձ որոշում համապատասխան Հոդվածների կիրառությունը:
2. Խառնուրդներին և պատրաստուկներին պետք է վերաբերվել նույն կերպ, ինչպես պարզ նյութերին, պայմանով, որ դրանք մնում են 2-րդ մասի 1-ին ծանոթագրության մեջ նշված՝ համապատասխան հրահանգներով սահմանված և դրանց հատկանիշների համաձայն որոշված խտության, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի համաձայն վերջին փոփոխության սահմաններում, եթե տոկոսային բաղադրություն կամ այլ նկարագրություն հատուկ նշված չէ:
3. Ներքոնշյալ հատուկ քանակությունները վերաբերում են յուրաքանչյուր հաստատության:
4. Համապատասխան հոդվածների կիրառման առնչությամբ դիտարկվող քանակությունները ցանկացած ժամանակ առավելագույն առկա կամ հավանական քանակություններն են: Հաստատությունում առկա համապատասխան հատուկ քանակության ընդամենը 2%-ին համարժեք կամ պակաս քանակությամբ վտանգավոր նյութերը պետք է անտեսվեն՝ առկա ամբողջ քանակությունը հաշվարկելու համար, եթե դրանց տեղը հաստատության ներսում այնպիսին է, որ մեկ այլ տեղ խոշոր վթարի պատճառ լինել չի կարող :
5. 2-րդ Մասի 4-րդ ծանոթագրության մեջ նշված կանոնները, որոնցով ղեկավարվում է վտանգավոր նյութերի հավելման գործընթացը, կամ վտանգավոր նյութերի կատեգորիաները, կիրառվում են համապատասխան դեպքերում:

▼M2

6. Սույն Հրահանգի նպատակներով՝ գազ է համարվում ցանկացած նյութ, որը 20 °C ջերմաստիճանում ունի 101,3 կիլոպասկալին հավասար կամ ավելի բացարձակ գոլորշու ճնշում:

7. Սույն Հրահանգի նպատակներով՝ հեղուկ է համարվում ցանկացած նյութ, որը սահմանված չէ որպես գազ և որը 20 °C ջերմաստիճանում ու 101,3 կիլոպասկալ ստանդարտ ճնշման տակ չի գտնվում պինդ վիճակում:

▼B

**ՄԱՍ 1
Անվանապես նշված նյութեր**

Այն դեպքում, երբ 1-ին մասում թվարկված նյութը կամ նյութերի խումբը դասվում է 2-րդ մասի կարգին, ապա պետք է օգտագործվեն 1-ին մասում մանրամասն նշված հատուկ քանակությունները:

Սյունակ 1	Սյունակ 2	Սյունակ 3
Վտանգավոր նյութեր	Հատուկ քանակություններ (արտահայտված տոննաներով)՝ հետևյալի կիրառության համար	
	Հոդվածներ 6 և 7	Հոդված 9
Ամոնիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 1)	5 000	10 000
Ամոնիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 2)	1 250	5 000
Ամոնիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 3)	350	2 500
Ամոնիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 4)	10	50
Կալիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 5)	5 000	10 000
Կալիումի նիտրատ (տես՝ ծանոթագրություն 6)	1 250	5 000
Բրոմին	20	100
Քլոր	10	25
Նիկելի միացությունները՝ ներշնչվող փոշու տեսքով (նիկելի միօքսիդ, նիկելի երկօքսիդ, նիկելի սուլֆիդ)		1
Էթիլենամին	10	20
Ֆտոր	10	20
Ֆորմալդեհիդ (խտությունը $\geq 90\%$)	5	50
Զրածին	5	50
Քլորաջրածին (հեղուկացված գազ)	25	250
Կապարի ալկիլ	5	50

Հեղուկացված չափազանց հրավտանգ գազեր (այդ թվում՝ հեղուկացված նավթային գազ՝ ՀՆԳ) և բնական գազեր	50	200
Ացետիլեն	5	50
Էթիլենի օքսիդ	5	50
Պրոպիլենի օքսիդ	5	50
Մեթանոլ	500	5 000
4, 4-Մեթիլեն-Բիս (2-քլորանիլին) և (կամ) աղեր՝ փոշու տեսքով		0,01
Մեթիլիսոցիանատ		0,15
Թթվածին	200	2 000
Տոլուոլ դիհիդրոցիանատ	10	100
Կարբոնիլի երկքլորիդ (ֆոսգեն)	0,3	0,75
Արսենիումի տրիհիդրիդ (արսին)	0,2	1
Ֆոսֆորի տրիհիդրիդ (ֆոսֆին)	0,2	1
Ծծմբի երկքլորիդ	1	1
Ծծմբի եռօքսիդ	15	75
Պոլիքլորոդիբենզոֆուրաններ և պոլիքլորիդոբենզոդիոքսիններ (ներառյալ քառաքլորոդիբենզոդիոքսին TCDD), հաշվարկված քառաքլորոդիբենզոդիոքսինի (TCDD) համարժեքով		0,001
Հետևյալ ՔԱՂՏԿԵՂԱԾԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ 5 %-ից ավելի խտությամբ՝ ըստ կշռի 4-Ամինոբիֆենիլ և (կամ) դրա աղերը, բենզոտրիքլորիդ, բենզիդիլենը և դրա աղերը, բիս-քլորմեթիլային եթեր, քլորմեթիլ մեթիլային եթեր, 1,2- դիբրոմեթան, երկեթիլային սուլֆատ, երկմեթիլ սուլֆատ, դիմեթիլկարբամոլիլ քլորիդ, երկբրոմո-3-քլորոպրոպան, 1,2-երկմեթիլիդրացին, երկմեթիլնիտրոզամին, հեքսամեթիլֆոսֆորական տրիամիդ, հիդրազին, 2- նավթիլամին և (կամ) դրա աղերը, 4-նիտրոդիֆենիլ և 1,3 պրոպանսուլտոն	0,5	2
Նավթամթերքներ՝ ա) բենզին և նավթ. բ) կերոսին (ներառյալ ռեակտիվ վառելիքները). գ) գազային յուղեր (ներառյալ դիզելային վառելիքը, տունը ջեռուցելու յուղերը և գազային յուղերի խառնուրդի հոսքերը):	2 500	25 000

▼B

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▼M2

1. Ամոնիումի նիտրատ (5 000/10 000)՝ ինքնակազմալուծման ընդունակ պարարտանյութեր

Սա կիրառվում է ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ (ամոնիումի նիտրատի հետ ֆոսֆատ և (կամ) ածխաթթու կալիում պարունակող բարդ/բաղադրյալ պարարտանյութեր), որոնցում ազոտի բաղադրությունը, որպես ամոնիումի նիտրատի արդյունք,

- տատանվում է 15,75% (10) –24,5% (11)-ի միջև՝ ըստ կշռի , կամ պարունակում է 0,4 %-ը չգերազանցող դյուրավառ/ օրգանական նյութեր կամ որոնք բավարարում են 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները,
- 15,75% (15,75% (12) ըստ կշռի կամ պակաս և անսահմանափակ դյուրավառ նյութեր, որոնք ընդունակ են ինքնակազմալուծման՝ համաձայն ՄԱԿ–ի Trough Test-ի (տես՝ Վտանգավոր ապրանքների փոխադրման մասին Միավորված ազգերի կազմակերպության առաջարկություններ՝ Ուսումնասիրությունների և չափորոշիչների ուղեցույց, Մաս III, ենթաբաժին 38.2):

2. Ամոնիումի նիտրատ (1 250/5 000)՝ պարարտանյութի տեսակը

Սա կիրառվում է անմիջապես ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի և ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ, որոնցում ազոտի բաղադրությունը՝ որպես ամոնիումի նիտրատի արդյունք

- ավելի քան 24,5% է ՝ ըստ կշռի՝ բացառությամբ ամոնիումի նիտրատի և դոլոմիտի, կրաքարի և (կամ) կալցիումի կարբոնատի հետ առնվազն 90% մաքրությամբ խառնուրդների,
- ավելի քան 15,75%՝ ըստ կշռի՝ ամոնիումի նիտրատի և ամոնիումի սուլֆատի խառնուրդներում,
- տատանվում է 24,5%-ից մինչև 28% միջև՝ ըստ կշռի, և որոնք պարունակում են ավելի քան 0,4% դյուրավառ նյութեր, ավելի քան 28% (13)՝ ըստ կշռի ամոնիումի նիտրատի և դոլոմիտի, կրաքարի ու (կամ) կալցիումի կարբոնատի հետ առնվազն 90 % մաքրությամբ խառնուրդներում,

և որոնք բավարարում են 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները:

3. Ամոնիումի նիտրատ (350/2500)՝ տեխնիկական տեսակը

Սույնը կիրառվում է՝

- ամոնիումի նիտրատի և ամոնիումի նիտրատի պատրաստուկների նկատմամբ, որոնցում ազոտի բաղադրությունը՝ որպես ամոնիումի նիտրատի արդյունք
- տատանվում է 24,5 %-ից մինչև 28 %-ի միջև՝ ըստ կշռի, և որոնք պարունակում են ավելի քան 0,4 % դյուրավառ նյութեր,
- ավելի քան 28 %՝ ըստ կշռի և որոնք պարունակում են ավելի քան 0,2 % դյուրավառ նյութեր,
- ամոնիումի նիտրատի ջրային լուծույթ, որում ամոնիումի նիտրատի խտությունը ավելի քան 80 % է՝ ըստ կշռի:

4. Ամոնիումի նիտրատ (10/50)՝ անհամապատասխան նյութեր և պայթյունի փորձարկմանը չբավարարող պարարտանյութեր

Սույնը կիրառվում է՝

- արտադրական գործընթացից դուրս հանված նյութերի և ամոնիումի նիտրատի ու ամոնիումի նիտրատի պատրաստուկների, անմիջապես ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութերի և ամոնիումի նիտրատի հիմքով բարդ/ բաղադրյալ պարարտանյութերի նկատմամբ, որոնց մասին նշված է 2-րդ և 3-րդ ծանոթագրությունների հատկորոշումներում,
- 1-ին ծանոթագրության առաջին պարբերություն և 2-րդ ծանոթագրության մեջ նշված պարարտանյութերի նկատմամբ, որոնք չեն բավարարում 80/876/ԵՏՀ հրահանգի II հավելվածի պահանջները:

5. Կալիումի նիտրատ (5 000/10 000)՝ կալիումի հիմքով բաղադրյալ պարարտանյութեր՝ բաղկացած հատիկային տեսքով կալիումի նիտրատից

6. Կալիումի նիտրատ (5 000/1,250)՝ կալիումի հիմքով բաղադրյալ պարարտանյութեր՝ բաղկացած բյուրեղային տեսքով կալիումի նիտրատից

▼B

►M2

7. ◀ Պոլիքլորիդիբենզոֆուրան և պոլիքլորիդիբենզոդիոքսին

Պոլիքլորիդիբենզոֆուրանի և պոլիքլորիդիբենզոդիոքսինի քանակությունները հաշվվում են՝ կիրառելով հետևյալ գործոնները.

Պոլիքլորիդիբենզոֆուրանի և պոլիքլորիդիբենզոդիոքսինի քանակությունները հաշվվում են կիրառելով հետևյալ գործոնները՝

Միջազգային թունավոր նյութերին համարժեք գործոնների առկայությամբ (ITEF) մտահոգություն առաջացնող նմանատիպ նյութեր (NATO/CCMS)	
2,3,7,8-TCDD 1	2,3,7,8-TCDF 0,1
1,2,3,7,8-PeDD 0,5	2,3,4,7,8-PeCDF 0,5
	1,2,3,7,8-PeCDF 0,05
1,2,3,4,7,8-HxCDD 1,2,3,4,7,8-HxCd 1,2,3,6,7,8-HxCDD	1,2,3,6,7,8-HxCDF 1,2,3,6,7,8-HxCDF 1,2,3,6,7,8-HxCDF 0,1 2,3,4,6,7,8-HxCDF
1,2,3,4,6,7,8-HpCDD 0,01	
OCDD 0,001	1,2,3,4,6,7,8-HpCDF 0,01 1,2,3,4,7,8,9-HpCDF
	OCDF 0,001

(T = tetra, P = penta, Hx = hexa, HP = hepta, O = octa)

ՄԱՍ 2

1-ին մասում անվանապես հատուկ չնշված նյութերի և պատրաստուկների կատեգորիաները

Սյունակ 1	Սյունակ 2	Սյունակ 3
Վտանգավոր նյութերի կատեգորիաները	Վտանգավոր նյութերի 3(4) հոդվածով որոշված հատուկ քանակությունը (արտահայտված տոննաներով)՝ հետևյալի կիրառման համար	
	Հոդվածներ 6 և 7	Հոդված 9
1. ՉԱՓԱԶԱՆՑ ԹՈՒՆԱՎՈՐ	5	20
2. ԹՈՒՆԱՎՈՐ	50	200
3. ՕՔՍԻԴԱՅՆՈՂ	50	200
4. ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ (տես՝ 2րդ ծանոթագրությունը)	50	200

Եթե նյութը, պատրաստուկը կամ առարկան դասվում են UN/ADR 1.4 բաժնում		
5. ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ (տես՝ 2-րդ ծանոթագրությունը) Եթե նյութը, պատրաստուկը կամ առարկան դասվում են վերը նշվածներից ցանկացածի կարգին 1.1, 1.2, 1.3, 1.5 կամ 1.6 UN/ADR բաժիններ կամ R2 կամ R3 ռիսկի ծածկագրեր	10	50
6. ԴՅՈՒՐԱՎԱՌ (Եթե նյութը կամ պատրաստուկը բնորոշվում է 3 (ա) ծանոթագրության մեջ նշված սահմանմամբ)	5 000	50 000
7ա. ՇԱՏ ԴՅՈՒՐԱՎԱՌ (Եթե նյութը կամ պատրաստուկը բնորոշվում է 3 (բ) (1) ծանոթագրության մեջ նշված սահմանմամբ)	50	200
7բ. ՇԱՏ ԴՅՈՒՐԱՎԱՌ հեղուկներ (Եթե նյութը կամ պատրաստուկը բնորոշվում է 3 (բ) (2) ծանոթագրության մեջ նշված սահմանմամբ)	5 000	50 000
8. ՉԱՓԱԶԱՆՑ ԴՅՈՒՐԱՎԱՌ (Եթե նյութը կամ պատրաստուկը բնորոշվում է 3(գ) ծանոթագրության մեջ նշված սահմանմամբ)	10	50
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ՝ ռիսկի ծածկագրեր		
i) R50 «Չափազանց թունավոր ջրային օրգանիզմների համար» (ներառյալ R50/53)	100	200
ii) R51/53: «Թունավոր՝ ջրային օրգանիզմների համար, կարող է երկարատև բացասական ազդեցություն ունենալ ջրային միջավայրի վրա»	200	500
10. ՑԱՆԿԱՑԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ, որը չի կարգավորվում վերոնշյալով, ռիսկերի ծածկագրերի հետ համատեղ՝		
i) R14 «անմիջապես ռեակցիայի մեջ է մտնում ջրի հետ» (ներառյալ R14/15)	100	500
ii) R29: «ջրի հետ շփվելուց թունավոր գազեր է բաց թողնում»	50	200

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▼M2

1. Նյութերը և պատրաստուկները դասակարգված են համաձայն հետևյալ հրահանգների և դրանց ընթացիկ հարմարեցումը կատարվել է տեխնիկական առաջընթացին համապատասխան՝

Վտանգավոր նյութերի դասակարգման, փաթեթավորման և պիտակավորմանն առնչվող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի

համապատասխանեցման մասին Խորհրդի 1967 թվականի հունիսի 27-ի 67/548/ԵՏՀ հրահանգ (14).

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 31-ի 1999/45/ԵՀ հրահանգ՝ վտանգավոր պատրաստուկների դասակարգման, փաթեթավորման և պիտակավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին (15).

Այն դեպքում, երբ նյութերը և պատրաստուկները, որոնք դասակարգված չեն որպես վտանգավոր՝ վերոնշյալ ոչ մի հրահանգի համաձայն, օրինակ՝ թափոնները, որոնք, այնուամենայնիվ, առկա են, կամ հավանական է, որ առկա լինեն հաստատությունում և որոնց հաստատությունը տիրապետում է կամ հնարավոր է, որ տիրապետի հաստատությունում ստեղծված պայմանների ներքո, խոշոր վթարի հավանականության տեսակետից համարժեք հատկությունները, պայմանական դասակարգման ընթացակարգերը պետք է պահպանվեն՝ համապատասխան Հրահանգի հոդվածի համաձայն:

Այն դեպքում, երբ նյութերի և պատրաստուկներն ունեն այնպիսի հատկանիշներ, որոնք մտնում են մեկից ավելի դասակարգումների մեջ, սույն Հրահանգի նպատակով պետք է կիրառվի ամենացածր հատուկ քանակությունը: Այնուամենայնիվ, 4-րդ Ծանոթագրության մեջ նշված կանոնի կիրառման համար օգտագործված հատուկ քանակությունը միշտ պետք է համապատասխանի տվյալ դասակարգմանը:

Սույն Հրահանգի նպատակներով, Հանձնաժողովը պետք է 67/548/ԵՏՀ հրահանգի համաձայն կայացված ներդաշնակ որոշմամբ կազմի և թարմացնի նյութերի մի ցանկ, որոնք դասակարգվել են վերոնշյալ կատեգորիաներով:

2. «պայթյունավտանգ» նշանակում է՝

- այն նյութը կամ պատրաստուկը, որն ստեղծում է պայթյունի վտանգ՝ ցնցումի, շփման, հրդեհի կամ բռնկման այլ աղբյուրների միջոցով (ռիսկի ծածկագիր՝ R2),
- այն նյութը կամ պատրաստուկը, որն ստեղծում է պայթյունի վտանգ՝ ցնցումի, շփման, հրդեհի կամ բռնկման այլ աղբյուրների միջոցով (ռիսկի ծածկագիր՝ R3),

– այն նյութը, պատրաստուկը կամ առարկան, որը կարգավորվում է «Վտանգավոր բեռների ավտոճանապարհով միջազգային փոխադրումների մասին» Եվրոպական համաձայնագրի 1-ին դասով (UN/ADR), որը կնքվել է 1957 թվականի սեպտեմբերի 30-ին, փոփոխվել և փոխատեղվել է Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի 94/55/ԵՀ հրահանգով՝ համապատասխանեցնելու համար «Վտանգավոր բեռների ավտոճանապարհով փոխադրման մասին» անդամ պետությունների օրենքներին:

(16)

Այս սահմանման մեջ ներառված են այն պայթուցիկները, որոնք սույն Հրահանգի նպատակով սահմանված են որպես նյութեր (կամ նյութերի խառնուրդներ), նախատեսված ջերմության, լույսի, գազի կամ ծուխ կամ այդ հետևանքների համակցություն արտադրելու համար՝ ինքնուրույն ջերմազատիչ քիմիական ռեակցիաներ առաջացնելու միջոցով: Եթե նյութը կամ պատրաստուկը, որը դասվել է ինչպես UN/ADR դասին, այնպես էլ R2 և R3 ռիսկի ծածկագրերի կարգին, ապա UN/ADR դասակարգումը պետք է գերակայի ռիսկերի ծածկագրին:

1-ին դասում նշված նյութերը և առարկաները դասակարգվում են 1.1-ից մինչև 1.6-ն ընկած ցանկացած բաժնում՝ UN/ADR դասակարգման սխեմայով: Համապատասխան բաժիններն են՝

Բաժին 1.1 ` Նյութեր կամ առարկաներ, որոնք ներկայացնում են զանգվածային պայթյունի վտանգ (զանգվածային պայթյունն այն պայթյունն է, որն ազդում է գրեթե ամբողջ ուժգնությամբ, ըստ էության՝ ակնթարթորեն)

Բաժին 1.2 ` Նյութերն ու առարկաները, որոնք ներկայացնում են պրոյեկցիոն, սակայն ոչ զանգվածային պայթյունի վտանգ

Բաժին 1.3 ` Այն նյութերը և առարկաները, որոնք առաջացնում են հրդեհի և փոքր պայթյունի կամ փոքր նետման վտանգ և կամ երկուսը միասին, սակայն ոչ զանգվածային պայթյունի վտանգ՝

ա) որոնց այրումը հանգեցնում է ճառագայթման հետևանքով առաջացող բավականաչափ ջերմության կամ

բ) որոնք այրվում են մեկը մյուսի ետևից, առաջացնելով փոքրիկ պայթյուն կամ նետման ազդեցություն, կամ երկուսն էլ

Բաժին 1.4 ` Այն նյութերը և առարկաները, որոնք թեթև վտանգ են ներկայացնում բռնկման կամ տեղափոխության ընթացքում շփման հետևանքով: Սակայն հետևանքները հիմնականում չեն տարածվում փաթեթից դուրս և շոշափելի չափսի կամ քանակի բեկորների նետում չի ակնկալվում: Արտաքին հրդեհը, գործնականում, փաթեթի ամբողջ պարունակության ակնթարթային պայթյուն չի առաջացնում:

Բաժին 1.5 ` Շատ անզգայուն նյութեր, որոնք զանգվածային պայթյունի վտանգ են ներկայացնում, սակայն այնքան անզգայուն են, որ կատարման բնականոն պայմաններում այրումից պայթյունի առաջացման կամ վերածվելու հավանականությունը շատ քիչ է: Որպես նվազագույն պահանջ՝ դրանք արտաքին հրակայունության փորձարկման ժամանակ չեն պայթում:

Բաժին 1.6` Չափազանց անզգայուն առարկաներ, որոնք զանգվածային պայթյունի վտանգ չեն ներկայացնում: Այդ առարկաները պարունակում են միայն չափազանց անզգայուն պայթուցիկ նյութեր և բռնկման ու տարածման չնչին հավանականություն ունեն:

Սույն սահմանման մեջ են մտնում նաև առարկայի պարունակության մեջ առկա՝ բռնկվող կամ հրավառ նյութերը, կամ պատրաստուկները: Այն դեպքում, երբ առարկան բռնկվող կամ հրավառ նյութեր է պարունակում կամ պատրաստուկ և հայտնի է այդ նյութի կամ պատրաստուկի քանակությունը, ապա այն պետք է հաշվի առնվեն սույն Հրահանգի նպատակներով: Եթե հայտնի չէ այդ քանակությունը, ապա սույն Հրահանգի նպատակներով՝ ամբողջ առարկան պետք է դիտվի որպես բռնկուն:

▼B

3. 6-րդ, 7-րդ և 8-րդ կատեգորիաները՝ համապատասխանաբար <դյուրավառ>, <շատ դյուրավառ> և <չափազանց դյուրավառ> նշանակում են՝

ա) դյուրավառ հեղուկներ.

այրմանը նպաստող նյութեր և պատրաստուկներ, որոնց բռնկման կետը բարձր է կամ հավասար 21 °C-ին և ցածր է կամ հավասար 55 °C-ին (ոիսկի ծածկագիր՝ R 10).

բ) շատ դյուրավառ հեղուկներ՝

1. – նյութեր և պատրաստուկներ, որոնք կարող են շիկանալ և ի վերջո բռնկվել արտաքին շրջապատում առկա ջերմաստիճանում օդի հետ շփման մեջ մտնելու արդյունքում՝ առանց որևէ էներգիայի կիրառման (ռիսկի ծածկագիր՝ R 17).

▼M2

- նյութերը և պատրաստուկները, որոնց բռնկման միավոր ցածր է 55 °C-ից և որոնք շարունակում են մնալ հեղուկ վիճակում՝ լինելով ճնշման տակ, երբ հատուկ մշակման պայմանները, ինչպիսիք են բարձր ճնշումը կամ բարձր ջերմաստիճանը, կարող են խոշոր վթարի վտանգ լինել.

▼B

2. նյութեր և պատրաստուկներ, որոնց բռնկման կետը ցածր է 21 °C-ից և որոնք չափազանց դյուրավառ չեն (ռիսկի ծածկագիր՝ R 11, երկրորդ պարբերությ).

գ) չափազանց դյուրավառ գազեր և հեղուկներ՝

1. հեղուկ նյութեր և պատրաստուկներ, որոնց բռնկման կետը ցածր է 0 °C-ից և եռման կետը (կամ եռման ընթացքի դեպքում՝ եռման սկզբնական կետը) բնականոն ճնշման դեպքում ցածր է կամ հավասար՝ 35 °C-ի (ռիսկի ծածկագիր՝ R 12, առաջին պարբերությ) և

▼M2

2. գազեր, որոնք արտաքին շրջապատում առկա ջերմաստիճանում և ճնշման տակ օդի հետ շփման մեջ մտնելու դեպքում դյուրավառ են (ռիսկի ծածկագիր՝ R12, երկրորդ պարբերությ), և որոնք գտնվում են գազային կամ ծայրահեղ կրիտիկական վիճակում:
3. Դյուրավառ և շատ դյուրավառ հեղուկ նյութերը և պատրաստուկները, որոնք պահվում են իրենց եռման կետից բարձր ջերմաստիճանում:
4. Այն դեպքում, երբ հաստատությունում առկա չեն վերոնշյալ քանակությամբ կամ համապատասխան հատուկ քանակությանը համարժեք առանձին նյութեր կամ պատրաստուկներ, պետք է կիրառվի հետևյալ կանոնը՝ որոշելու համար՝ արդյոք

հաստատությունը կարգավորվում է սույն Հրահանգի համապատասխան պահանջներով:

Սույն Հրահանգը կիրառվում է, եթե $q_1/Q_{U1} + q_2/Q_{U2} + q_3/Q_{U3} + q_4/Q_{U4} + q_5/Q_{U5} + \dots$ գումարը մեծ է կամ հավասար 1-ի

որտեղ $q_x =$ վտանգավոր նյութի x քանակությունն է (կամ վտանգավոր նյութերի կատեգորիան), որը դասվում է սույն հավելվածի 1-ին և 2-րդ մասերում,

իսկ $Q_{UX} = x$ նյութի կամ կատեգորիայի համապատասխան հատուկ քանակությունն է՝ 1-ին և 2-րդ Մասերի 3-րդ սյունակից:

Սույն Հրահանգը կիրառվում է, բացառությամբ 9-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածների, եթե $q_1/Q_{L1} + q_2/Q_{L2} + q_3/Q_{L3} + q_4/Q_{L4} + q_5/Q_{L5} + \dots$ մեծ կամ հավասար է 1-ի,

որտեղ $q_x = x$ -ը վտանգավոր նյութի քանակությունն է (կամ վտանգավոր նյութերի կատեգորիան), որը դասվում է սույն հավելվածի 1-ին և 2-րդ մասերին,

իսկ $Q_{LX} = -$ ը նյութի կամ կատեգորիայի համապատասխան հատուկ քանակությունն է՝ 1-ին և 2-րդ մասերի 2-րդ սյունակից:

Սույն կանոնը կիրառվում է՝ գնահատելու համար թունավորման, դյուրավառության և էկո-թունավորման ընդհանուր վտանգը: Հետևաբար, այն պետք է կիրառվի երեք անգամ՝

ա) 1-ին մասում նշված և որպես թունավոր կամ շատ թունավոր դասակարգված նյութերն ու պատրաստուկները՝ 1-ին և 2-րդ կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին հավելելու համար.

բ) 1-ին մասում նշված և որպես օքսիդացնող, պայթյունավտանգ, դյուրավառ, շատ դյուրավառ կամ չափազանց դյուրավառ դասակարգված նյութերը և պատրաստուկները՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7 ա), 7 բ) կամ 8-րդ կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին հավելելու համար.

գ) 1-ին մասում նշված և որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր դասակարգված (R50 (ներառյալ R50/53) կամ R51/53) նյութերը և պատրաստուկները՝ 9(i) կամ 9(ii) կատեգորիաներին դասվող նյութերին և պատրաստուկներին հավելելու համար.

Սույն Հրահանգի համապատասխան դրույթները կիրառվում են, եթե (ա), (բ) կամ (գ)-
ում նշվածի գումարը մեծ է կամ հավասար է 1-ի:

ՀԱՎԵԼՎԱԾ II

**ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏՎՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ
ՆՇՎԱԾ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏՔ Է
ԴԻՏԱՐԿՎԵՆ**

I. Խոշոր վթարի կանխման նպատակով կառավարման համակարգի և հաստատության կառուցվածքի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվություն

Սույն տեղեկատվությունը պետք է պարունակի III հավելվածում նշված տարրերը:

II. Հաստատության շրջակայքը ներկայացնելը

Ա. տեղանքի և դրա շրջակայքի նկարագրությունը՝ ներառյալ աշխարհագրական դիրքը, օդերևութաբանական, երկրաբանական, հիդրոգրաֆիկ պայմանները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրա պատմությունը,

Բ. այն սարքավորումների և հաստատությունների մյուս գործողության տեսակների հայտնաբերումը, որոնք կարող են իրենցից խոշոր վթարի վտանգ ներկայացնել,

Գ. նկարագրությունն այն տարածքների, որտեղ կարող է խոշոր վթար տեղի ունենալ:

III. Կայանքի նկարագրությունը

Ա. Հիմնական գործունեության տեսակների և հաստատության անվտանգության տեսակետից կարևոր բաժինների արտադրանքների, խոշոր վթարի վտանգների աղբյուրների և պայմանների նկարագրություն, որոնց դեպքում կարող է այդպիսի խոշոր վթար պատահել, ինչպես նաև առաջարկվող կանխարգելիչ միջոցների նկարագրություն,

Բ. գործընթացների, մասնավորապես, շահագործման եղանակների նկարագրություն,

Գ. վտանգավոր նյութերի նկարագրություն,

1. վտանգավոր նյութերի ցուցակը, որը ներառում է՝

- վտանգավոր նյութի հայտնաբերումը՝ քիմիական անվանում, CAS համար, անվանումը՝ համաձայն IUPAC նոմենկլատուրայի.

- վտանգավոր նյութերի առավելագույն առկա կամ հավանական քանակությունը.
- 2. ֆիզիկական, քիմիական, թունաբանական հատկանիշները և մարդկանց ու շրջակա միջավայրի համար անմիջական և հետագա վտանգների նշումը
- 3. ֆիզիկական և քիմիական վիճակը՝ բնականոն կամ կանխատեսելի վթարային պայմաններում կիրառելու դեպքում:

IV. Հայտնաբերում, վթարային վտանգների վերլուծություն և կանխարգելիչ մեթոդներ

Ա. Հնարավոր խոշոր վթարների սցենարների, դրանց հավանականության կամ այն պայմանների մանրամասն նկարագրությունը, որոնց դեպքում տեղի են ունենում վթարները՝ ներառյալ այն դեպքերի համառոտագիրը, որոնք կարող են իրենց դերն ունենալ այդ սցենարների առաջացման մեջ, ինչպես նաև կայանքի ներսում կամ դրանից դուրս եղած պատճառները:

▼M2

Բ. Բացահայտված խոշոր վթարների հետևանքների խստության ու չափի գնահատում՝ ներառյալ քարտեզները, նկարները կամ համապատասխան դեպքում՝ հավասարազոր նկարագրություններ, որտեղ ցույց կտրվեն հաստատությունում առաջացած այդ վթարների ազդեցությանը ենթարկվելիք տարածքները, որոնք կարգավորվում են 13(4) և 20-րդ հոդվածների դրույթներով:

▼B

Գ. Տեխնիկական պարամետրերի և կայանքների անվտանգության համար օգտագործվող սարքավորումների նկարագրություն:

V. Կանխարգելիչ միջոցներ և միջամտություն՝ վթարի հետևանքները սահմանափակելու նպատակով

Ա. Խոշոր վթարների հետևանքները սահմանափակելու համար գործարանում տեղադրված սարքավորումների նկարագրություն,

Բ. տազնապ բարձրացնելը և միջամտությունը,

Գ. ներքին կամ արտաքին, մոբիլիզացվող միջոցների նկարագրություն,

Դ. Վերոնշյալ Ա, Բ և Գ կետերում նկարագրված տարրերի համառոտագիր, որն անհրաժեշտ է՝ 11-րդ հոդվածի համաձայն պատրաստված ներքին արտակարգ իրավիճակի ծրագիր կազմելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՈՇՈՐ ՎԹԱՐՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Տնտեսավարող սուբյեկտի խոշոր վթարների կանխման քաղաքականության և անվտանգության կառավարման համակարգի կիրառման նպատակով պետք է հաշվի առնվեն հետևյալ տարրերը: 7-րդ հոդվածում նշված փաստաթղթով սահմանված պահանջները պետք է համամասնական լինեն հաստատության կողմից ներկայացված խոշոր վթարի վտանգների հետ՝

- ա) խոշոր վթարների կանխման քաղաքականությունը պետք է գրավոր կազմվի և պետք է ընդգրկի տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր նպատակներն ու խոշոր վթարների վտանգների վերահսկման գործունեության սկզբունքները.
- բ) անվտանգության կառավարման համակարգը պետք է ընդգրկի ընդհանուր կառավարման համակարգի այն մասը, որը ներառում է կազմակերպական կառուցվածքը, պարտականությունները, գործելակերպերը, ընթացակարգերը և խոշոր վթարների կանխման քաղաքականության որոշման ու իրականացման գործընթացները և միջոցները.
- գ) անվտանգության կառավարման համակարգում պետք է դիտարկվեն հետևյալ հարցերը՝

▼M2

- i) կազմակերպություն և անձնակազմ՝ խոշոր վթարների կառավարման մեջ ներգրավված անձնակազմի դերը և պատասխանատվությունը՝ կազմակերպության բոլոր մակարդակներում: Այդ անձնակազմի վերապատրաստման անհրաժեշտությունը և այդպիսով որոշված վերապատրաստման նախապատրաստությունը: Հաստատության աշխատակիցների և ենթապայմանագրերով աշխատող անձնակազմի ներգրավվածությունը:

▼B

- ii) խոշոր վթարների սահմանում և գնահատում՝ բնականոն և ոչ բնականոն գործունեության հետևանքով առաջացող խոշոր վթարների պարբերական սահմանման ընթացակարգերի ընդունում և իրականացում, ինչպես նաև դրանց հավանականության ու ծանրության աստիճանի գնահատում.
- iii) գործունեության հսկողություն՝ ընթացակարգերի ու հրահանգների ընդունում և իրականացում անվտանգ աշխատանքի, այդ թվում՝ կայանի շահագործման, գործընթացների, սարքավորումների և աշխատանքի ժամանակավոր դադարների մասով.
- iv) փոփոխությունների կառավարում՝ նոր կայանքների, գործընթացների, պահեստների նախագծման կամ դրանց հետ կապված փոփոխությունների պլանավորման ընթացակարգերի ընդունում և իրականացում.

▼M2

- v) արտակարգ իրավիճակների համար նախատեսված պլանավորում՝ պարբերաբար կատարվող վերլուծության միջոցով կանխատեսելի արտակարգ իրավիճակների որոշման, այդ արտակարգ իրավիճակներին արձագանքելու նպատակով արտակարգ իրավիճակների ծրագրերի պատրաստման, փորձարկման ու վերանայման և համապատասխան անձնակազմին հատուկ վերապատրաստմամբ ապահովման ընթացակարգերի ընդունում և իրականացում: Այդպիսի վերապատրաստում պետք է անցնի հաստատության ամբողջ անձնակազմը՝ ներառյալ համապատասխան ենթապայմանագրերով աշխատող անձնակազմը.

▼B

- vi) դիտանցման իրականացում՝ տնտեսավարող սուբյեկտի խոշոր վթարների կանխման քաղաքականությամբ և անվտանգության կառավարման համակարգով սահմանված նպատակների պահպանման շարունակական գնահատման ընթացակարգերի ընդունում և իրականացում, իսկ անհամապատասխանության դեպքում՝ ուսումնասիրության ու ուղղիչ գործողությունների ձեռնարկման մեխանիզմներ: Ընթացակարգերը պետք է ընդգրկեն, մասնավորապես, կանխարգելիչ միջոցների չկատարման հետևանքով առաջացած խոշոր վթարների և վթարի նախադրյալների մասին տեղեկացնելու տնտեսավարող

սուբյեկտի համակարգը, ինչպես նաև քաղված դասերի հիման վրա իրականացված ուսումնասիրությունն ու հետագա գործողությունները.

vii) աուդիտ և վերահսկողություն՝ խոշոր վթարների կանխման քաղաքականության և անվտանգության կառավարման համակարգի արդյունավետության ու համապատասխանության պարբերական և համակարգված գնահատումների ընթացակարգերի ընդունում ու իրականացում, քաղաքականության և անվտանգության կառավարման համակարգի իրականացման, փաստաթղթերի վրա հիմնված, վերահսկողություն և դրանց թարմացում՝ վերադաս ղեկավարների կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ՝ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ներքին արտակարգ իրավիճակի ծրագրեր

- ա) Այն անձանց անունները կամ պաշտոնների անվանումները, ովքեր լիազորված են գործողության մեջ դնել արտակարգ իրավիճակների ընթացակարգերը և այն անձի անունը կամ պաշտոնը, ով պատասխանատու է տեղում մեղմացուցիչ գործողության համակարգման համար:
- բ) Այն անձի անունը կամ պաշտոնը, ով պատասխանատու է արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրի պատասխանատու մարմնի հետ կապ հաստատելու համար:
- գ) Խոշոր վթարների առաջացման մեջ էական դեր ունեցող կանխատեսելի պայմանների և իրադարձությունների դեպքում՝ դրանց վերահսկմանն ու հետևանքների սահմանափակմանն ուղղված գործողությունների, այդ թվում նաև՝ անվտանգության սարքավորումների և առկա միջոցների նկարագրությունը:
- դ) Տեղանքում գտնվող անձանց համար վտանգի սահմանափակման միջոցառումները, այդ թվում նաև՝ ինչպես պետք է տրվեն նախազգուշացումները և այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն այդ անձանց կողմից՝ նախազգուշացում ստանալուց հետո:
- ե) Արտաքին արտակարգ իրավիճակի ծրագիրը գործողության մեջ դնելու համար լիազորված մարմնին պատահարի մասին վաղ նախազգուշացմամբ ապահովելու միջոցառումները, այն տեղեկատվության տեսակը, որը պետք է պարունակի նախնական զգուշացումը, և ավելի մանրամասն տեղեկատվության մատչելի դառնալու դեպքում՝ դրա տրամադրման միջոցառումները:
- զ) Վերապատրաստման անձնակազմից ակնկալվող պարտավորությունների կատարման և անհրաժեշտության դեպքում դրանք տեղանքից դուրս գտնվող արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ համակարգելու միջոցառումները:
- է) Տեղանքից դուրս՝ մեղմացուցիչ գործողությամբ, աջակցություն ապահովելու միջոցառումները:

2. Արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրեր

- ա) Անունները կամ պաշտոններն այն անձանց, ովքեր լիազորված են շարժման մեջ արտակարգ իրավիճակների ընթացակարգեր սահմանելու և անունները կամ պաշտոններն այն անձանց, ովքեր լիազորված են ստանձնելու տեղանքից դուրս գործողության համակարգման պատասխանատվությունը:
 - բ) Պատահարի մասին վաղ նախազգուշացում ստանալու, տագնապի ազդանշաններ և կանչ տալու միջոցառումներ:
 - գ) Արտաքին արտակարգ իրավիճակի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցների համակարգման միջոցառումներ:
 - դ) Տեղում՝ մեղմացուցիչ գործողությամբ աջակցություն ապահովելու միջոցառումները:
 - ե) Տեղանքից դուրս՝ մեղմացուցիչ գործողության միջոցառումներ:
 - զ) Հասարակությանն իր կողմից դրսևորվելիք վարքի, ինչպես նաև վթարի մասին հատուկ տեղեկատվությամբ ապահովման միջոցառումները:
 - է) Այլ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների ծառայություններին հնարավոր անդրսահմանային հետևանքներ ենթադրող խոշոր վթարի դեպքում տեղեկատվություն տրամադրելու միջոցառումներ:
-

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ 13(1) ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԸ

1. Տնտեսավարող սուբյեկտի անվանումը և հաստատության հասցեն:
2. Տեղեկություններ տրամադրող անձի նույնականացումը՝ ըստ նրա զբաղեցրած պաշտոնի:
3. Հաստատում այն մասին, որ հաստատությունը ենթարկվում է սույն Հրահանգի իրականացմանն ուղղված կանոնակարգերին և (կամ) վարչական ակտերին և որ 6 (3) հոդվածում նշված ծանուցումը կամ 9 (1) հոդվածում նշված անվտանգության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է իրավասու մարմին:
4. Հաստատության ներսում իրականացված գործունեության կամ գործունեության տեսակների հստակ բացատրություն:
5. Հաստատությունում ներգրավված նյութերի և պատրաստուկների ընդհանուր անվանումները, իսկ I հավելվածի 2-րդ մասով կարգավորվող վտանգավոր այն նյութերի դեպքում, որոնց պատճառով կարող են առաջանալ խոշոր վթարներ՝ տեսակին բնորոշ անվանումը կամ ընդհանուր դասակարգումն ըստ վտանգավորության՝ դրանց գլխավոր վտանգավոր հատկանիշների նշումով:
6. Ընդհանուր տեղեկատվություն խոշոր վթարների վտանգների բնույթի և բնակչության ու շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ:
7. Համապատասխան տեղեկատվություն այն մասին, թե խոշոր վթարի դեպքում ինչպես պետք է նախազգուշացվի և տեղեկացվի համապատասխան բնակչությունը:
8. Համապատասխան տեղեկատվություն այն մասին, թե խոշոր վթարի դեպքում համապատասխան բնակչությունը ինչպիսի գործողություններ պետք է ձեռնարկի և ինչպիսի վարք դրսևորի :
9. Հաստատում այն մասին, որ տնտեսավարող սուբյեկտից պահանջվում է համապատասխան միջոցառումներ իրականացնել տեղում՝ մասնավորապես արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ համագործակցությամբ՝ խոշոր

վթարներին առնչվող հարցերով զբաղվելու և դրանց ազդեցությունները նվազեցնելու համար:

10. հղում՝ Վթարի հետևանքով կողմնակի ազդեցություններին դիմակայելու համար նախատեսված արտաքին արտակարգ իրավիճակների ծրագրին : Խորհուրդ պետք է տրվի վթարների ժամանակ համագործակցել արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ՝ կատարելով նրանց ցանկացած ցուցումը կամ պահանջը:
11. Մանրամասներ այն մասին, թե որտեղ կարելի է ստանալ հետագա համապատասխան տեղեկատվություն՝ համաձայն ազգային օրենսդրությամբ սահմանված գաղտնիության պահանջների:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՎԹԱՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ 15(1) ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

- I. Հանձնաժողովին պետք է ծանուցվի 1-ին պարբերությամբ կարգավորվող ցանկացած վթարի կամ 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ պարբերություններում նկարագրված հետևանքներից առնվազն մեկի դեպքում:

1. Ներգրավված նյութեր

Ցանկացած հրդեհի կամ պայթյունի և կամ վթարի հետևանքով վտանգավոր նյութի I հավելվածի 3-րդ սյունակում սահմանված հատուկ քանակության առնվազն 5% չափով արտահոսք:

2. Մարդկանց վնասվածքներ ստանալու և անշարժ գույքի վնասվելու դեպքեր

Վտանգավոր նյութի անմիջական ներգրավմամբ ցանկացած վթար, որը պատճառ է հետևյալ դեպքերից որևէ մեկի համար՝

- մահացություն.
- հաստատության ներսում վեց անձի վնասվածքներ ստանալը և առնվազն 24 ժամով հոսպիտալացումը.
- հաստատությունից դուրս մեկ անձի վնասվածք ստանալը և առնվազն 24 ժամով հոսպիտալացումը.
- հաստատությունից դուրս գտնվող կացարանի (կացարանների) վնասվելը և վթարի հետևանքով կիրառության համար անպետք դառնալը.
- անձանց էվակուացիան կամ մեկուսացումը ավելի քան 2 ժամով (անձերի թիվ × ժամերի քանակ)՝ արժեքը պետք է լինի առնվազն 500
- խմելու ջրի, էլեկտրաէներգիայի, գազի մատակարարման կամ հեռախոսային ծառայության ընդհատում ավելի քան 2 ժամով (անձերի թիվ × ժամերի քանակ)՝ արժեքը պետք է լինի առնվազն 1000:

3. Անմիջական վնաս՝ միջավայրին

- *Ցամաքային միջավայրին պատճառված մշտական կամ երկարաժամկետ վնաս՝*
 - 0,5 կամ ավելի հեկտար ընդգրկող՝ օրենսդրությամբ պաշտպանված բնապահպանական կամ պահպանման կարևորություն ունեցող միջավայր.
 - 10 կամ ավելի հեկտար ընդգրկող լայնատարած միջավայր՝ ներառյալ գյուղատնտեսական հողերը:
- *Քաղցրահամ ջրերին և ծովային միջավայրին պատճառված էական կամ երկարաժամկետ վնաս՝ (17)*
 - 10 կամ ավելի կիլոմետր ընդգրկող գետ կամ ջրանցք.
 - 1 կամ ավելի հեկտար ընդգրկող լիճ կամ ջրամբար.
 - 2 կամ ավելի հեկտար ընդգրկող գետաբերան.
 - 2 կամ ավելի հեկտար ընդգրկող ջրափնյա գիծ կամ բաց ծով:
- *Ջրային շերտին կամ ստորգետնյա ջրերին պատճառված էական վնաս (18)*
 - 1 հեկտար կամ ավելի

4. Գույքին պատճառված վնաս

- հաստատության ներսում գտնվող գույքի վնաս՝ նվազագույնը 2 միլիոն ԵԱՄ (Եվրոպական արժույթի միավոր) արժողությամբ
- հաստատությունից դուրս գտնվող գույքի վնաս՝ առնվազն 0,5 միլիոն ԵԱՄ արժողությամբ

5. Միջսահմանային վնաս

Վտանգավոր նյութի անմիջական ներգրավմամբ ցանկացած վթար, որն ազդեցություններ է ունենում համապատասխան անդամ պետության տարածքից դուրս:

II. Հանձնաժողովին պետք է ծանուցվի այն վթարների կամ «վթարի նախադրյալների» մասին, որոնք խոշոր վթարների կանխման և դրանց հետևանքների սահմանափակման առումով ու անդամ պետությունների դիտարկմամբ հատուկ տեխնիկական նշանակություն ունեն և չեն բավարարում վերոնշյալ քանակական չափորոշիչները:

(1) ՊՏ Թիվ C 106, 14.04.1994թ., էջ 4 և ՊՏ թիվ C 238, 13.09.1995թ., էջ 4:

(2) ՊՏ Թիվ C 295, 22.10.1994, էջ 83:

(3) Եվրոպական պառլամենտի 1995 թվականի փետրվարի 16-ի եզրակացություն (ՊՏ Թիվ C 56, 06.03.1995թ., էջ 80), Խորհրդի 1996 թվականի մարտի 19-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ Թիվ C 120, 24.04.1996 թ., էջ 20) և Եվրոպական պառլամենտի 1996թվականի հուլիսի 15-ի որոշում (ՊՏ Թիվ C 261, 09.09.1996թ. էջ 24):

(4) ՊՏ Թիվ L 230, 05.08.1982թ., էջ 1: Թիվ 91/692/ԵՏՀ որոշմամբ փոփոխված Հրահանգ (ՊՏ Թիվ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(5) ՊՏ Թիվ C 112, 20.12.1973, էջ 1:

ՊՏ Թիվ C 139, 13.06.1977թ., էջ 1:

ՊՏ Թիվ C 46, 17.02.1983թ., էջ 1:

ՊՏ Թիվ C 70, 18.03.1987թ., էջ 1:

ՊՏ Թիվ C 138, 17.05.1993թ., էջ 1:

(6) ՊՏ Թիվ C 328, 07.12.1987, էջ 3:

(7) ՊՏ Թիվ C 138, 17.05.1993թ.:

(8) ՊՏ Թիվ L 183, 29.06.1989, էջ 1:

(9) ՊՏ Թիվ L 377, 31.12.1991, էջ 48:

10) 15,75 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ 45 % ամոնիումի նիտրատի արդյունքում

11) 24,5 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ 70 % ամոնիումի նիտրատի արդյունքում

12) 15,75 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ 45 % ամոնիումի նիտրատի արդյունքում

13) 28 % ազոտի բաղադրությունն ըստ կշռի՝ 80 % ամոնիումի նիտրատի արդյունքում

(14) ՊՏ L 196, 16.08.1967թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 807/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36):

(15) ՊՏ L 200, 30.07.1999 թ., էջ 1: Հանձնաժողովի 2001/60/ԵՀ հրահանգով (ՊՏ L 226, 22.08.2001թ., էջ 5):

(16) ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 7: 2003/28/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 90, 08.04.2003թ., էջ 45):

(17) Վնասը գնահատելիս համապատասխան դեպքերում հղում կարող է կատարվել 75/440/ԵՏՀ, 76/464/ԵՏՀ հրահանգներին և որոշ նյութերի կիրառման վերաբերյալ հրահանգներին, դրանք են՝ 76/160/ԵՏՀ, 78/659/ԵՏՀ, 79/923/ԵՏՀ հրահանգները և կամ հղում կատարվի Լետալ/մահացու խտությանը (LC), որն ազդում է շրջակա միջավայրի ներկայացուցիչների 50 % -ի վրա, ինչպես սահմանված է 92/32/ԵՏՀ հրահանգի «շրջակա միջավայրի համար վտանգավոր» չափանիշով:

(18) Վնասը գնահատելիս համապատասխան դեպքերում հղում կարող է կատարվել 75/440/ԵՏՀ, 76/464/ԵՏՀ հրահանգներին և որոշ նյութերի կիրառման վերաբերյալ հրահանգներին, դրանք են՝ 76/160/ԵՏՀ, 78/659/ԵՏՀ, 79/923/ԵՏՀ հրահանգները և կամ հղում կատարվի Լետալ/մահացու խտությանը (LC), որն ազդում է շրջակա միջավայրի ներկայացուցիչների 50 % -ի վրա, ինչպես սահմանված է 92/32/ԵՏՀ հրահանգի «շրջակա միջավայրի համար վտանգավոր» չափանիշով:

